


ՄԻՔԱՅԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ



Ազգային Հայրցի եւ Գեոցիոյի Ուսումնասիրման Կենտրոն

Հայոց ողբերգությունը ռուսական հասարակական-
քաղաքական մտքի գնահատմամբ,
Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոն
Երևան, 1997

Աշխատությունը նվիրված է Օսմանյան կայսրությունում հայության Ցեղասպանության պատմության լուսաբանմանը ռուսական հասարակական-քաղաքական եւ պատմագիտական մտքի ներկայացուցիչների կողմից: Թեման ունի ոչ միայն գիտական նշանակություն, այլեւ քաղաքական կարևորություն եւ հրատապություն:

Նախատեսված է մասնագետների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

Խմբագիր՝ Անահիտ Մանվելյան
Համակարգչային շարվածք եւ ձեւավորում՝ Մարինե Աղեկյանի

Տպագրվել է ԱՀԳՈՒԿ-ում:

© Միքայել Մուրադյան, 1997

© Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոն, 1997

Բոլոր իրավունքները վերապահված են: Սույն գրքույկի բովանդակության վերարտադրումը, ոչ շահադիտական նկատառումներով, մասամբ կամ ամբողջությամբ թույլատրվում է՝ պայմանով, որ նշվեն հեղինակը եւ հրատարակիչը:

Նվիրում եմ որդիներին՝ Նարեկին,
Արեգին, Ալամյիկին Հայոց ողբերգությունը
հարվելով հիշելու և իրատես եզրահանգման
մեծագույն ակնկալիքներով:

Մ.Մուրադյան

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ առանձնահատուկ ողբերգական փորձություններով նշանավորվեց 20-րդ դարի սկիզբը, երբ երիտթուրքական վարչակարգի կողմից ծրագրվեց եւ իրականացվեց Հայոց Ցեղասպանությունը: Արեւմտահայության բնաջնջմամբ սակայն հայ ժողովրդի դահիճների ծրագրերը չիրականացան: Ձեւավորվեց եւ ամրապնդվեց հայոց ազգային պետականությունը, ի վերջո հայ ժողովուրդը գոյատևեց իր հայրենիքի արեւելյան հատվածում: Հայության ոչնչացման պատասխանատուները ստացան իրենց արժանի պատիժը՝ ընկնելով վրիժառուների գնդակներից: Սա լավագույն պատասխանն էր ոչ միայն քաղաքներին, էնվերներին, ջեմալներին, այլեւ հետագա պատմությունը կեղծող առանձին քաղաքագետներին եւ «մասնագետներին»: Համաշխարհային հասարակական-քաղաքական կարծիքը, այդ թվում նաեւ ռուս ժողովրդի լավագույն ներկայացուցիչների ժամանակին իրենց անաչառ ու հավաստի փաստերով, գնահատականներով ստեղծեցին ամուր հենք պատմությունը կեղծարարությունից պաշտպանելու եւ արդարության հաղթանակի համար: Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» հայտնի գրքի հայերեն ու ռուսերեն թարգմանության առաջաբանում հայ ժողովրդի բարեկամ, ռուս մեծ բանաստեղծ Սիխայիլ Դուդինը գրում է. «Ողջ Թուրքիայում կոտորում էին հայերին, բայց կանգուն է Մուսա լեռը՝ հայոց արիության անմատչելի լեռը... Արմաքամ է լինում, բայց դիմանում է Մուսա լեռը... Խելագարության բոցերով բռնված ամբողջ երկրում միայնակ չի հանձնում իր մարդկային ոգու արիության բարձունքը»: Հայոց Ցեղասպանության վերաբերյալ ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների թողած հարուստ տեղեկությունների ու գնահատականների լուսաբանումը ունի ոչ միայն պատմագիտական, այլ նաեւ քաղաքական նշանակություն ու հրատապություն: Հայ ժողովրդի «թշնամությունը» թուրք ժողովրդի նկատմամբ

«մերկացնող» մերօրյա «քաղաքագետները» ուղղակի հաշվի չեն առնում այն պարզ ճշմարտությունը, որ անցած ութ տասնամյակի ընթացքում չգտնվեց գեթ մեկ թուրք հումանիստ, քաղաքական գործիչ կամ պատմաբան, որ դատաւարտեր ոճրագործությունը հայ ժողովրդի հանդեպ: Հայոց Յեղասպանության դատապարտման, ապա եւ պաշտոնական ճանաչման համար մղվող տեսական պայքարում իր ավանդն է ունեցել ռուսական հասարակական-քաղաքական միտքը: Հայ-ռուսական դարավոր քաղաքական, գինակցային եւ մշակութային առնչությունները, Հայկական Հարցում ռուսաց դիվանագիտության գրավված կարեւոր դիրքորոշումը եւ շատ այլ պայմաններ առարկայորեն նպաստեցին մի կողմից հայապաշտպան գործունեության ծավալմանը, մյուս կողմից թուրքական քաղաքականության դատապարտմանը: Ռուսաստանի ներկայացուցիչները առաջիններից էին, որ դատապարտեցին Մեծ ցեղասպանության նախերգանք հանդիսացող 1894-1896 թթ. արդուկհամիդյան ջարդերը: Դրանով իսկ նրանք անուղղակիորեն հանդես եկան նաեւ լրբանդ-ռոստոցկիների արտաքին քաղաքականության ոչ հայանպաստ դիրքորոշման դեմ: 1896-97 թթ. հրատարակվեցին երկու ժողովածուներ՝ «Հայերի դրությունը Թուրքիայում մինչեւ տերությունների միջամտությունը 1895 թ.» եւ «Նորայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»: Այստեղ գետեղված հոդվածները յուրատեսակ բողոք էին սուլթանական կառավարության կողմից կազմակերպված հայկական ջարդերի դեմ: Ռուսական հասարակական-քաղաքական միտքը քաջ գիտակցում էր, որ Մեծ եղեռնը ինչ-որ չափով նաեւ պայմանավորված էր ռուս-թուրքական դարավոր հակամարտությամբ, հայ ժողովրդի մեջ հարեւան քրիստոնյա պետության նկատմամբ որոշակի դրական վերաբերմունքի առկայությամբ, ինչը ստիպեց թուրքական կառավարող շրջաններին արագացնելու հայկական լեռնաշխարհի հայերից աստիճանաբար հայաթափելու դարավոր ծրագիրը: Հայոց եղեռնի միջազգային ճանաչման համար պայքարը շարունակվում է եւ այդ պայքարում կարեւորագույն նշանակություն ունեն ռուս հասարակական-քաղաքական մտքի լավագույն ներկայացուցիչների անաչառ գնահատականներն ու վկայությունները:

ՄԵԾ ՈՒ ԲԱՐԴ ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԹՈՒՐԹԻՉՄՈՒ

Անտիկ աշխարհի նշանավոր մտածող մեծ Ցիցերոնի պատկերավոր արտահայտությամբ եւ գնահատմամբ պատմությունը ժամանակների վկան է, հիշողության կյանքը ու բարքերի ուսուցիչը: «Հայոց պատմությունը օժտված է Ցիցերոնի կողմից մատնանշված բոլոր հասկանիչներով»:¹

Հայոց հազարամյա տարեգրության մեջ նրա Իլիականը եւ Ոդիսականը՝ հերոսական ու ողբերգական բազում էջերը, ճախրումները եւ անկումները, վերընթաց ու վայրընթաց նշանակության պատմական իրադարձությունները, առարկայական եւ ենթակայական պատմաքաղաքական գործոնների հետեւանքներով միահյուսվելով ու անցնելով դարերի ելեւջների միջով հասավ եւ թեւակոխեց հրաշագործ ու հրեշավոր քսաներորդ հարյուրամյակ: Հայոց աննախադեպ ողբերգությունը՝ 90-ական թթ. հայկական կոտորածները, ապա եւ Մեծ եղեռնը Օսմանյան կայսրությունում, դրա լավագույն վկայությունն է, քանզի բուրքական հանցագործ ոճրագործությունը դիմագրավվեց հաղթական հերոսամարտերով վերածվելով պատմաքաղաքական ընդհանուր համալիր ամբողջության: Այս առումով միանգուսնայն օրինաչափ է, որ ռուսաց հասարակական-քաղաքական միտքը մի կողմից հիացմունքի ու դրվատանքի խոսք ասաց կարծես անխուսափելիորեն բնաջնջման դատապարտված հայ ժողովրդի գոյապաշտպանական կռիվների եւ դրա շնորհիվ մահվան ճիրաններից, մահասարսուռ մղձավանջից դուրս գալու

¹ "Собрание актов относящихся к обозрению истории армянского народа". М., 1838, ч.III, стр. 284.

համար, իսկ մյուս կողմից ի սփյուռս աշխարհի իր անկեղծ եւ գորեղ բողոքի ձայնը բարձրացրեց երիտթուրքերի զազանությունների դեմ ի պաշտպանություն արեւմտահայության:

Հայոց Սեծ Ցեղասպանությունը ռուսաց հասարակության լայն շրջանների համար ոչ անսպասելի էր, ոչ էլ անակնկալ, որովհետեւ վերջիններիս ներկայացուցիչները արդեն լսել ու ականատեսն էին եղել արդուլիամիդյան արյունոտ վայրագություններին Սասունում, Ջեթրունում, ապա Կ.Պոլսում, երիտթուրքերի կազմակերպած կոտորածներին Ադանայում, «Միություն եւ Առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից մշակված Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայության վերջնական բնաջնջմանն ու բռնի տեղահանությանը:

Թուրքիայում ապրող հայությանը սպառնացող աղետի, նրա գլխին կախված դամոկլյան նոր սրի ու հասունացող առավել ահեղ արհավիրքի մասին էին տեղեկացնում Կ.Պոլսի ռուսաց դեսպանատան աշխատակիցները. հատկապես Արեւմտյան Հայաստանի քաղաքներում արտոնագրված ռուսաց հյուպատոսներն իրենց պաշտոնական ահազանգող զեկուցագրերում, տագնապալի ճեպագրերում ու նամակներում: Ընդհանրապես Ռուսաստանի պետական, քաղաքական շատ գործիչներ, հասարակական մտքի ներկայացուցիչներ ի հակադրություն 1890-ական թթ. ցարիզմի կարծատես մերձավոր արեւելյան քաղաքականության, մշտապես հետաքրքրվում էին Արեւմտյան Հայաստանի կարգավիճակով ու արեւմտահայության կացությամբ: Այն, իհարկե, ուներ իր հիմնարար պատճառները, որոնք գերազանցապես պայմանավորված էին առաջին աշխարհամարտի նախօրյակին ստեղծված ռազմաքաղաքական իրադրությամբ: Ռուսաստանի պետական, քաղաքական այրերը իրատեսորեն անխուսափելի էին համարում համաներկայական մեծ պատերազմը, որը կարելուրում էր ռուսաց դիվանագիտության հետաքրքրությունը արեւմտահայության նկատմամբ: Այս առնչությամբ նրանք բնավ էլ չէին բացառում Ռուսաստանի դեմ պատերազմում Թուրքիայի հնարավոր մասնակցությունը: Դեպքերի զարգացման նման պարագայում արեւելահայերը որպես ռուսաց կայսրության

հայատականեր կարող էին անմիջապես մասնակցել ռազմական գործողություններին, իրենց ներդրումն ունենալ Թուրքիային ջախջախելու գործում, իսկ արեւմտահայերը հուսալի հենարան դառնալ ռուս զորքերի համար: Պատմությունը բազում անգամ ապացուցել է Ռուսաստանի հանդեպ արեւմտահայության ունեցած ակնկալիքները: Պատմական փաստ է նաեւ, որ ռուս-թուրքական գրեթե բոլոր պատերազմներում ռազմական գործողությունները գերազանցապես տեղի էին ունենում Արեւմտյան Հայաստանում: Ահա ինչու, երբ Թուրքիան որպէս Գերմանիայի դաշնակից մտաւ պատերազմի մեջ, ռուսաց հասարակական-քաղաքական մտքի հեռանկտ գործիչներին ակնհայտ դարձաւ, թե ինչպիսի նոր փորձություններ են բաժին ընկնելու Օսմանյան կայսրությունում ապրող հայությանը: Այս միտքը կարմիր թելի պէս անցնում էր ինչպէս պարբերական մամուլում տպագրված բազում հոդվածներում, այնպէս էլ պետական, քաղաքական գործիչների պաշտոնական ելույթներում: 1914 թ. հոկտեմբերի 21-ին, այսինքն Թուրքիայի կողմից պատերազմի մեջ մտնելուց եւ ռազմական առաջին գործողությունները ծավալելուց հետո Մոսկվայի Խաղաղության ընկերության ընդհանուր ժողովի ընդունած բանաձեւում հստակ էր մտաւախության գիտակցումը Թուրքիայում ապրող քրիստոնյաների, հատկապէս արեւմտահայության ճակատագրի նկատմամբ: «Թուրքիայում,- ասված է այդ բանաձեւում,- ապրում են միլիոնավոր քրիստոնյաներ: Պատերազմի ժամանակ Թուրքիայի քրիստոնյա բնակչությանը սպառնալու է մեծ վտանգ: Բայց հույներն ու սլավոններն ունեն իրենց կառավարությունները, որոնք կարող են ձեռնարկել միջոցառումներ իրենց հպատակներին ու գեղակիցներին պաշտպանելու համար: Միայն հայերը չունեն իրենց կառավարությունը, որոնց մի մասը ապրում է Թուրքիայում, իսկ մյուս մասը Ռուսաստանում, ուստի եւ մենք չենք կասկածում, որ ռուսաց կառավարությունը չեզոք տերությունների ներկայացուցիչների միջոցով կձեռնարկի իրենից կախված բոլոր միջոցները հայկական վիլայեթների բնակչության ճակատագիրը ապահովելու համար, որտեղ խաղաղ ժամանակ եւս պարբերաբար տեղի էին ունենում հայերի կոտորածներ

քրդերի կողմից»¹ Այս բանաձեւը ուղարկվեց Ռուսաստանի արտգործնախարարին եւ Բեռնի Միջազգային Խաղաղության Բյուրոյին, վերջինիս միաժամանակ հղվեց հեռագիր Թուրքիայում ապրող հայ բնակչության ճակատագրով մտահոգվելու խնդրանքով։ Բեռնի Բյուրոն 1914 թ. նոյեմբերին Մոսկվայի Խաղաղության բնկերությանը տեղեկացրեց, որ ձեռնարկվել են համապատասխան քայլեր² Սակայն չէր նշվում, թե կոնկրետ ինչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ, հավանաբար, այն պատճառով, որ իրականում ոչ մի իրատես քայլ չէր կատարվել, իսկ եթե նույնիսկ ձեռնարկվեր, ապա հագիվ թե այն ունենար որեւէ էական նշանակություն, եթե, իհարկե, մի պահ անտեսենք հիմնահարցի բարոյական կողմը։ Մինչդեռ այդ սարսափելի աղետից արեւմտահայերին փրկելու համար անհրաժեշտ էին ոչ թե մարդասիրական ու բարոյախոսական բնույթի որոշումներ եւ հայտարարություններ, որոնք թուրք ոճրագործների համար սոսկ թղթի կտոր լինելով, բնականաբար, չէին կարող որեւէ նշանակություն ունենալ, այլ գորեղ դիմակայող ուժ հանցագործների ձեռքերը կտրելու եւ այդ ձեւով խաղաղ բնակչությանը նոր աղետից փրկելու համար։ Հայոց Մեծ Ցեղասպանությունը մեկ անգամ եւս ապացուցեց պատմական այն դառը ճշմարտությունը, թե պատերազմի ժամանակ մոռացության են մատնվում մարդասիրությունը, բարոյական սկզբունքները, խիղճը, ողջամտությունը, լռում են օրենքը, իրավունքը, եւ դրանց փոխարեն գործում են բռնությունը, սպանդը, բարբարոսությունը, կամայականությունը, եղեռնագործությունը՝ այդ ամենը պետական շահերի պաշտպանության, նրա անվտանգության ապահովման քողի ներքո եւ պատրվակով։

Հայոց Մեծ Ցեղասպանությունը լայնորեն մեկնաբանվեց աշխարհի շատ երկրների, ներառյալ եւ ռուսական, պարբերական մամուլում։ Տարբեր հասարակական-քաղաքական ուղղություններին պատկանող եւ զանազան գաղափարախոսություն դավանող ռուսական թերթերը եւ ամսագրերը ամենայն խստությամբ ու վճռականությամբ դատապարտեցին երիտթուրքերի հայակալ գործողությունները,

¹ "Армянский Вестник". 1916; №1, стр.2.

² Նույն տեղում։

անկեղծորեն կարեկցեցին արեւմտահայերին, համակրանքով, սիրով ու ջերմությամբ արտահայտվեցին բազում արհավիրքներ վերապրած հայ ժողովրդի մասին: Առանձնահատուկ էր այս կապակցությամբ հատկապես Մոսկվայում լույս տեսնող "Армянский вестник"-ի դերը եւ նշանակությունը, որն իր 2 տարվա գոյության ընթացքում (1916-1918 թթ.) հայ ու ռուս հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների ջանքերով սպառիչ ձեւով լուսաբանեց երիտթուրքերի հետապնդած նպատակները, Ցեղասպանության պատճառները, բացահայտեց արդուլիամիդյան ու երիտթուրքական հանցագործ քաղաքականության ընդհանուր կապը: Եւ այդ ամենի շնորհիվ ռուս ընթերցողների լայն շրջաններին պարզ էր դառնում, թե ինչ ողբերգական, մղձավանջային, մահասարսուռ ժամանակներ են ապրել արեւմտահայերը, թե ինչպես եւ ինչ միջոցներով էին ցանկանում թուրքական պետության հայատյաց պարագլուխները «լուծել» Հայկական Հարցը:

"Армянский вестник"-ի անդրանիկ համարում հայ փախստականների դժնդակ վիճակի մասին հիշողություններով հանդես եկավ այդ դեպքերի ժամանակակից ու ականատես Ն.Օգանովսկին: Հեղինակը եղել է Էջմիածնում ու ականատեսել Մեծ Եղեռնից մի կերպ փրկված գաղթականների ոչ պակաս ծանր ու դժնդակ դրությունը: Հոդվածը գրվել է անմիջական ազդեցությամբ Էջմիածնում վերստին լինելուց հետո: Թեւեւ նրա վերջին այցից անցել էր շուրջ հինգ ամիս, այնուամենայնիվ, նրանց կացությունում, ըստ էության, ոչինչ չէր փոխվել եւ «Բավական է,- գրում է նա,- փակել աչքերը, որպեսզի նորից արտասովոր հստակությամբ իմ ներքին հայացքի առջեւ անցնեն տեսած պատկերները, եւ վերստին մոռացության համար անմատչելի առանձնահատուկ զգացմունք եմ զգում, որը եւ անվանեցի առաջին հայացքից տարօրինակ՝ «հանգիստ սարսափ» տերմինով»:¹ Թերեւս իրավագի է հեղինակը, քանզի արտասովոր ու տարօրինակ ոչինչ չկա՝ մեր առջեւ է իր այլանդակ դրսեւորումներով սովորական թուրքիզմը, որը հանգիստ դիմում է սարսափելի չարագործությունների, դառնալով սովորական ֆաշիզմի չարագուշակ նախահայրը: Ն.Օգանովսկու հոդվածը պատմաքաղաքական հետա-

¹ "Армянский Вестник" 1916; №1, стр. 6.

քրքրություն է ներկայացնում ոչ միայն այն առումով, որ նա այս դժոխքի ականատեսն է, այլև օգտագործված նյութերի հավաստիության տեսանկյունից, քանզի գրվել է թուրքական սպայի օրագրում եղած փաստերի հիման վրա: Հայտնաբերված օրագիրը, հեղինակի իրավացի կարծիքով, արժեքավոր փաստաթուղթ է. քանզի հայերի դեմ կիրառված դաժանությունները բնավ էլ չեն կարող չափազանցված լինել: «Այնժամ, երբ մենք կանգնեցինք Շատախում,- նշված է թուրքական սպայի օրագրում,- ես տեսա, թե ինչպես էին գնդակահարում հայերին: Երեկոյան մենք սպանեցինք 70 մարդու, առավոտյան մնացածներին (ուարյուրից ավելի): Զինվորներից մեկը գնաց Շեն գյուղը եւ բոլոր հայերին տեսավ կոտորված կամ սողացող մահառաջի տառապանքներում»:¹

«Բիթլիսի ճանապարհին,- շարունակում է Ն.Օգանովսկին, փաստեր վկայակոչելով թուրք սպայի օրագրից,- տեսա փոքրիկ ձեռքերը գետնի վրա հողի մեջ թաղված մի հայ տղայի: Արյունը հոսում էր նրա բերանից ու քթից: Գետի ափին տեսա չորս դիակ. մեկը կանացի կտրված կրծքով եւ ծվատված արգանդով, մյուսը կտրատված էր մասերի, իսկ մնացածները ծածկված էին տասնյակ վերքերով: Դիակները ընկած էին ջրում, որը ես խմում էի հաճույքով, ինքս ինձ ասելով՝ «ահա ձեզ ինքնավարություն»:²

Բնական է, որ հենց նման պերճախոս վկայությունների համար է ասված, թե մեկնաբանություններն ավելորդ են: Թուրք սպայի բնագրային գեներտիկ ատելությունը, հային հոշոտելու զազանային մոլուցքը չի կարող կասկած հարուցել, այն անփիճելի է ու ակնհայտ: Եւ այս ամենը սովորական թուրքիզմի ոճով, որպես «հանգիստ սարսափների» դրսևորման վկայաշարք: Այսուհանդերձ ռուս հեղինակը չի սահմանափակվում դրանցով ու ընթերցողներին է ներկայացնում Բիթլիսի «գործողությունների» ականատես, ազգությամբ սիրիացի, թուրքական բանակի 36-րդ դիվիզիայի բժշկի վկայությունները, որի հետ Ն.Օգանովսկուն հաջողվել է հանդիպել՝ նա փախել էր Թուրքիայից: Սիրիացի բժիշկը պատմում է, որ «Բիթլիս չհասած, նա անտառում տեսել է մորթված տղամարդկանց կույտ, եւ նրանց կողքին, լիովին մերկ,

¹ "Армянский Вестник", 1916; №1, стр. 7.

² Նույն տեղում:

ոտքից կախված երեք կանանց: Նրանցից մեկի մոտ, ձգվելով դեպի մայրը, սող էր տալիս միամյա մի երեխա, իսկ դեռես կենդանի, դեմքը արյունով լցված մայրը ձեռքերը պարզում էր երեխային: Բայց նրանք չէին կարող հասնել միմյանց»:¹ Վերստին անդրադառնալով թուրք սպայի օրագրին, Ն.Օգանովսկին ցանկանում էր ցույց տալ, թե ինչպես էր թուրքական բանակի հրամանատարությունը հաշվեհալոյար տեսնում օսմանյան զորքում ծառայող ազգությամբ հայ զինվորների հետ: Թուրք սպան վկայում է, որ իրեն հրամայված էր գնդակահարելու համար առանձնացնել ու հավաքել բոլոր հայ զինվորներին: «Նրանց բոլորին խուզարկեցին, խլեցին փողերը եւ դուրս բերեցին քաղաքից: Իսկ քաղաքում ոստիկանները փշրում էին տան դռները, դուրս քաշում տղամարդկանց, կանանց, երեխաներին եւ նույնպես դուրս տանում քաղաքից: Միաժամանակ բոլոր խանութները, որոնք այստեղ ամբողջովին հայերի ձեռքին էին, բաց էին: Խելոք ազգը, տեղեկանալով կոտորածի մասին, այնուամենայնիվ բացել էր խանութները՝ լուսալով փրկել կյանքը: Նահանգապետը ինչպես պետք է խաբեց նրանց, ասելով, թե՝ «կառավարությունը միգուցե եւ ների ձեզ, եթե դուք լինեք հավատարիմ ու հնազանդ, ես կարող եմ հավատացնել ձեզ, որ համենայն դեպս կեսը կենդանի կմնա»: Խաբեց, թմրեցրեց եւ բոլորին մորթուեց: Նրա անունն է Աբդուլ Խալիլ բեյ»:² Այս ու նման վկայություններով ու փաստարկներով Ն.Օգանովսկին փորձում է ռուս հասարակությանը ցույց տալ, որ երիտթուրքերն իրենց նախապես մշակած ծրագրերը իրականացնելու համար դիմում էին ամեն ինչի, գործում նպատակը արդարացնում է միջոցը սկզբունքով: Հեղինակը բաջ պատկերացնում է, թե ինչ արհավիրքներ պատճառեց առաջին աշխարհամարտը արեւմտահայերին, որից անմիջապես շտապեցին օգտվել օսմանյան կայսրության պարագլուխները: Նա լիովին համոզված է, որ պատերազմի հասցրած ցնցումներից ծանրագույնը բաժին ընկավ հայ ազգին, որը նրա իրատես կարծիքով «հայտնվեց երկու կրակի միջեւ... Եւ զարմանալու ոչինչ չկա, որ այդ աշխատասեր, անքմահաճ ժողովուրդը, որը երջանիկ է, եթե իրեն վիճակված չէ ամեն բոլոր

¹ "Армянский Вестник", 1916; №1, стр. 7.

² Նույն տեղում:

դողալու իր կյանքի համար, եթե նրան հնարավորություն են տալիս հանգիստ աշխատել եւ աղոթել, եթե նա ամբողջ օրվա համար ունի մի կտոր լավաշ ու մի պտուկ մածուն՝ այդպիսի ժողովուրդը հասավ այնտեղ, որ միաձայն ասում է. «Չկա ճշմարտություն երկրի վրա»: Իսկ ուրիշները ավելացնում են՝ «Մենք չգիտենք կա՞ արդյոք այժմ Աստված երկնքում»: Երկրի վրա չկա ճշմարտություն, երկնքում չկա Աստված՝ այսպիսի հոգեկան վիճակի է հասցվել երբեմնի հոյակերտ ու հզոր տաճարներ կառուցող, երբեմնի մարդկության օրրան հովիտներում բարձր մշակույթ ստեղծող այդ ազգը»:¹ Անշուշտ, դժվար է ասել, թե հողվածը ավարտվում է լավատեսորեն. սակայն բացարձակ ճշմարտություն է, որ հողվածագիրը արեւմտահայության ջերմ պաշտպանն է, նրա վշտերի, տառապանքների, ողբերգության անկեղծ կարեկիցը: Պարզապես այն գրվել է 1916-ին՝ հայոց պատմության ամենամռայլ ժամանակահատվածում. երբ իհարկե դյուրին չէր, եթե ոչ անհնարին, արեւմտահայության քաղաքական կացությունում տեսնել լավատեսական միտումներ: Ի դեպ, նույն թվականի մարտին կյանքից հեռացավ հայ ժողովրդի լավ բարեկամներից, հայկական հարցի ջերմ պաշտպաններից, դրա քաջ գիտակներից, թուրքական ոճրագործությունները բազում անգամ խստագույնս դատապարտողներից մեկը միջազգային մակարդակի հասարակական գործիչ, գիտնական սոցիոլոգ ու պետականագետ Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալեսկին:

Հայ պարբերական մամուլը, հանդես գալով կարեկցանքի անկեղծ մահախոսականով, միաժամանակ երախտագիտությամբ նշեց մեծ հումանիստի հայանպաստ գործունեությունը, նրա սերտ բարեկամական կապերը հայ հասարակական-քաղաքական ու գիտական մտքի աչքի ընկնող ներկայացուցիչների հետ: Իր հերթին «Армянский Вестник»-ը, կարեւորելով հայկական մամուլի, մասնավորապես «Արեւի», «Մշակի», «Հորիզոնի» գնահատականները Կովալեսկու գործունեությանը՝ ի պաշտպանություն Հայ Դատի եւ ելնելով դրանք ռուս ընթերցողին ծանոթացնելու հրատապությունից, այդ հողվածներից իր էջերում առանձնացրեց քաղվածքներ, իհարկե, սեփական իրատես ու անաչառ մեկնա-բանություններով:

¹ «Армянский Вестник» 1916; №1, стр. 21.

Հայկական մամուլը միաձայն մատնանշում է, գրում է "Армянский Вестник"-ը, որ Մ.Մ.Կովալենսկու մահը մեծ կորուստ է ոչ միայն Ռուսաստանի, այլև քաղաքակիրթ մարդկության ու հատկապես փոքր ժողովուրդների համար, որոնց պաշտպանությամբ այդ «պայծառ, ուղղամիտ ու ազնիվ անհատը» հանդես էր գալիս ցանկացած պահին. ամեն անգամ, երբ դրա համար առիթ էր ներկայանում:¹ "Армянский Вестник"-ը անդրադառնում է նաև «Հորիզոնի» ուշագրավ գնահատականին, վերջինիս կարծիքով «Տոլստոյի ու Միխայլովսկու մահից հետո Կովալենսկու մահը առավել ծանր կորուստ է հատկապես ռուսական հասարակության սոցիոլոգիական մտքի համար»:² Իսկ «Արեւ» թերթը, հավանաբար նկատի ունենալով ռուս մեծ բանաստեղծ Նեկրասովի՝ «պոետ կարող ես դու չլինել, բայց քաղաքացի լինել պարտավոր ես» թեւավոր արտահայտությունը եւ ցանկանալով ընդգծել Կովալենսկու հասարակական-քաղաքական գործունեության կարեւորությունը, ընդգծում է, որ նա մալս քաղաքացետ էր, ջերմ հայրենասեր, ապա՝ գիտնական: Իհարկե թերթը բնավ էլ նպատակ չուներ նվազեցնել կամ թերագնահատել Կովալենսկու ներդրումը ռուսական գիտության, առանձնապես հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում, քանզի քաջատեղյակ էր նաև այդ ոլորտում նրա մատուցած ծառայություններին. "Армянский Вестник"-ը, հենվելով հայկական մամուլի վրա, ռուս ընթերցողին ներկայացրեց հետաքրքիր շատ դրվագներ Կովալենսկու հայանպաստ գործունեությունից ու հայ գործիչների հետ ունեցած կապերից: Այսպես, Փարիզում 1900 թ. տեղի ունեցած խաղաղության համաշխարհային վեհաժողովի ժամանակ հայ գործիչներ Ա.Առաքելյանը, դոկտոր Լորիս Մելիքյանը եւ Քր.Միքայելյանը որոշեցին Հայկական Հարցը դարձնել վեհաժողովի քննարկման առարկա: Նրանց ուժերով ու ջանքերով կազմվեց ծավալուն զեկուցում: Բայց անհրաժեշտ էր մի հեղինակավոր անձի ստորագրություն: Եւ հայ գործիչները դիմեցին հենց նրան՝ Կովալենսկուն: Վերջինս ոչ միայն սիրով

¹ "Армянский Вестник" 1916; №11, стр. 21.

² Նույն տեղում

համաձայնվեց, այլև անձամբ ներկայացավ վեհաժողով՝ պաշտպանելու Հայոց Դատը։ Դա այնպիսի մի ժամանակաշրջան էր, երբ արդու-համիդյան հայակույ մահաասարսուռ պետական մեքենան թափ առնելով կատարել էր իր սեւ գործը, եւ որի գոհր դարձան շուրջ 300 հազար արեւմտահայեր։ Սակայն մեծ հումանիստի հայանպաստ գործունեությունը, իհարկե, նման համեստ քայլով չէր սահմանափակվում եւ ավարտվում։ Նա 1905-1906 թթ. Ռուսաստան վերադառնալուց հետո հրատարակում է “Страна” (“Երկիր») պարբերականը, որը պաշտպանում էր հայ ժողովրդի օրինական իրավունքները, պահանջում Հայոց հարցի արդարացի լուծում։ Հայ գործիչների եւ Կովալեսկու միջեւ Փարիզում հաստատվել էին բարեկամական կապեր։ Ֆրանսիայի մայրաքաղաքում նշանավոր գիտնականը վայելում էր համընդհանուր սեր եւ հեղինակություն, այնտեղ նրա անբաժան ընկերներն էին մեր հայրենակից, 1919 թ. Հայաստանում բացված ազգային համալսարանի ապագա ռեկտոր պրոֆ. Գամբարովը (Դամբարյանը), ապա եւ Էմիլ դը Ռոբերտին։ Երեքն էլ աշխույժ հետաքրքրություն էին ցուցաբերում Հայկական Հարցի նկատմամբ, որն ավելի ամուր էր դարձնում նրանց կապը, սերտացնում համագործակցությունը։ Ոչ պակաս ամուր էին եւ ուժեղ Կովալեսկու կապերը Կլեմանսոյի, Ժորեսի, Կիլյարի հետ, որոնք համախմբված էին “Pro Armenia” ամսագրի շուրջ։ Կովալեսկին ոչ միայն նրանց հետ էր, այլեւ աչքի էր ընկնում իր իրատես խորհուրդներով եւ ցուցումներով։ Այդ համակողմանի կապերը հնարավորություն էին ընձեռում Կովալեսկուն ավելի առարկայորեն գնահատել հայկական հարցը, ավելի հստակորեն պատկերացնել այդ հիմնախնդրի լուծման ուղիները, հայ ժողովրդի ակնկալիքներն ու այդ առնչությամբ նշել Ռուսաստանի պատմական դերն ու քաղաքական նշանակությունը։ Եւ միանգամայն օրինաչափ է, որ «նա գրեց մի շարք հոդվածներ Հայկական Հարցի վերաբերյալ»։² Իսկ նրա մերձավորագույն բարեկամ Էմիլ դը Ռոբերտին ոչ միայն 1900 թ. մտավ “Pro Armenia”-ի խմբագրական կազմի մեջ, այլեւ հայ ու

¹ “Армянский Вестник” 1916; №11, стр. 21.

² Նույն տեղում.

ոչ հայ հռետորների թվում խաղաղության միջազգային վեհաժողովում նույնպես հանդես եկավ ի պաշտպանություն Հայոց 'Դատի, հանուն նրա արդար լուծման: Կովալուսկու լավագույն բարեկամներից էր նաև Միքայել Թամանյանը, որն ապրում էր Փարիզում ու իրավամբ հայտնի էր որպես հիանալի արեւելագետ: Ռուս հասարակական աչքի ընկնող գործիչը եւ գիտնականը անձամբ էր ճանաչում ՀՅԴ կուսակցության հիմնադիրներից մեկին՝ Քրիստափոր Միքայելյանին, Սորբոնի դահլիճներից մեկում նախագահում նրա դասախոսության ժամանակ, որը, նվիրված լինելով Հայկական Հարցին, կարդացվեց ռուսերեն: Այս ամենը իրավացիորեն իրավունք էր տալիս «Հորիզոնին» եզրակացնելու, որ Կովալուսկու մահվամբ «Ռուսաստանը կորցնում է իր առաջին սոցիոլոգին, հայ ժողովուրդը՝ զրկվում իր հազվագյուտ ու ազդեցիկ պաշտպաններից մեկից»:¹

Հատկանշական է, որ Կովալուսկու մահվանից մեկ ամիս առաջ, 1916 թ. փետրվարին, նրա հետ հանդիպել ու Հայաստանի ապագա ճակատագրի, նրա քաղաքական կարգավիճակի եւ լուծման ուղիների, Հայոց Ցեղասպանության վերաբերյալ երկար զրուցել է հայ հասարակական մտքի նշանավոր ներկայացուցիչ Ա.Ջիվելեգովը, որի մասին «Մ.Մ.Կովալուսկին ու Հայաստանը» խորագրով տպագրվեց "Армянский Вестник"-ում:²

Կովալուսկին ըստ էության Հայկական Հարցին չանդրադարձավ, քանզի կրկնությունից խուսափելու համար նա ուղղակի հիշեցրեց, թե հիմնախնդրի մասին արդեն տպագրել է ընդհանուր բնույթի հոդված "Вестник Европы" ամսագրի 1915 թ. հունիսյան գրքույկում,³ որի վերաբերյալ խոսք կլինի ստորեւ: Ահա ինչու զրույցի ընթացքում ռուս սոցիոլոգը գերազանցապես անդրադարձավ Արեւմտյան Հայաստանին, վեց վիլայեթներին ու Հայաստանի ապագայի հետ առնչվող հիմնահարցերին: «Վեց վիլայեթները,- ասաց նա,- կմիավորվեն մեկ գեներալ-նահանգապետի իշխանության ներքո... նրան կանվանեն իշխան, թե միայն փոխարքա՝ կախված կլինի այն բանից, թե

¹ "Армянский Вестник" 1916, №10, стр. 2.

² Նույն տեղում:

³ "Вестник Европы", Петроград, 1915 г., №10, стр. 2.

կատանա՞ արդյոք հյուսիսային Անատոլիան լավագույն դեպքում բուֆեր-պետության կարգավիճակ Ռուսաստանի հովանավորության ներքո, թե՞ նրա (Ռուսաստանի -Մ.Մ.) հետ կապված կլինի իրական ունիայով, որպիսին, ասենք գոյություն ունի Ֆինլանդիայի համար»։¹ Կովալենկու կարծիքով տերությունները հավանաբար թեև իրենց տնօրինության ներքո կթողնեն իշխանի կամ փոխարքայի ընտրությունը, այսուհանդերձ բոլոր դեպքերում ղեկավար դերը բաժին է ընկնելու Ռուսաստանին։ «Իս է միաժամանակ պահանջում թե այն վճռական դերը, որ նախորդ փուլերում խաղում էր Ռուսաստանը հայ-թուրքական կնճռոտ առնչություններում ու Հայոց հարցի ճակատագրում, թե նրա, որպես ուղղափառ մեծ տերության դիրքը, որի հովանու ներքո կանգնած է ու իր ինքնուրույնությունն է պահպանում հայ լուսավորչական եկեղեցին։ «Հայոց հարցը,- ավարտում է իր միտքը Կովալենսկին,- մեծ է ու բարդ»։²

Կովալենկու տեսակետը արեւմտյան վեց վիլայեթները մեկ գեներալ-նահանգապետի իշխանության ներքո միավորելու վերաբերյալ լիովին համընկնում էր ռուսաց լիվանագիտության այն նախագծին, որը Ռուսաստանի նախաձեռնությամբ քննարկեցին Կ.Պոլսում մեծ տերությունների ղեսպանատան ներկայացուցիչները 1912-1914 թթ. Հայկական Հարցի վերաբացման ընթացքում։ Ընդհանրությունն ակնհայտ է ու անվիճելի։ Անկասկած է, որ նա ոչ միայն քաջատեղյակ էր, այլև ընդունելի էր համարում այդ նախագիծը, ելնելով այն հանգամանքից, որ Արեւմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը ինչ-որ չափով կարող էր բարելավել արեւմտահայության սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացությունը։ Ընդհանրապես Կովալենսկին լավատեղյակ էր Ռուսաստանի արեւելյան քաղաքականության հիմնական ուղղություններին, որը նրան հնարավորություն էր ընձեռում այդ տեսանկյունից մոտենալ Հայոց հիմնահարցին, այդ լույսի ներքո ուղիներ փնտրել հիմնախնդրի իրատես լուծման համար։ Ահա ինչու նա չի կասկածում, որ հայկական

¹ "Армянский Вестник" 1916; №6, стр. 256-274.

² "Армянский Вестник" 1916; №1.

վիլայեթները անխուսափելիորեն անցնելու են Ռուսաստանին՝ պատերազմում հաղթանակ ձեռք բերելու օրենքով եւ իրավունքով: Կովալեւսկու սերտ բարեկամական կապերը հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների հետ նպաստեցին, որպեսզի նա ավելի հստակ ու խորը պատկերացնի հայ-ռուսաց բազմաբնույթ առնչությունների պատմության ողջ համալիրը, այդ կարեւորագույն հարցին մոտենա ինչպես Ռուսաստանի շահերից, այնպես էլ հայ ժողովրդի ակնկալիքներից: Ելնելով այս ամենից, նա առարկայական է համարում Ռուսաստանի ակտիվ մասնակցությունը դիվանագիտական պայքարին Հայկական Հարցի շուրջ, քանզի նրա կենսական շահերը մեծ տերությունների համեմատությամբ ավելի ցցուն էին եւ ակնհայտ: Իսկ դա իր հերթին նշանակում էր, որ պետք է մեծ լինեն Ռուսաստանի թե՛ իրավունքը, թե՛ պարտականությունը: Կովալեւսկու հետ զրույցի ժամանակ քննարկվեց նաեւ փոքրաթիվ ժողովուրդների պատմական ճակատագիրը, հատկապես հետաքրքիր էր նրա տեսակետն այն մասին, թե ինչպես կարելի է ապահովել նրանց իրական անվտանգությունը: Հիմնախնդրի պատասխանը սոցիոլոգ գիտնականը տվեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի եւ Հայկական Հարցի մեծ ու կնճռոտ, բարդ ու հակասական հանգուցակետի լուծման տեսանկյունից: «Պատմության մեջ, - ասաց նա, - փոքրաթիվ ժողովուրդների ճակատագիրը կարող է ամուր ապահովված լինել միայն այն ժամանակ, երբ մարդկությունը ժամանակակից միջազգային քաղաքական կարգից անցնի պետությունների դաշնության: ...Ձեր Հայաստանը, ինչպես եւ Բելգիան, ինչպես Սերբիան, ինչպես Լեհաստանը, միայն այնժամ կստանա վերջնական սահմանադրություն եւ կդադարի վախենալ քրդից, թուրքից... Իսկ ահա քանի դեռ մենք ձեզ հետ զրույց ենք սահմանադրություններ, ի՞նչ է կատարվում Հայաստանում»:¹ Անշուշտ, Կովալեւսկին նկատի ուներ 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնը: «Ոչ, - ավարտում է նա իր միտքը, - չի կարելի, ոչ մի կերպ չի կարելի փոքրաթիվ ժողովուրդներին առանց դաշնության»:² Կովալեւսկու կարծիքը 'Դաշնության վերաբերյալ

¹ "Армянский Вестник" 1916; №10, стр. 2.

² Նույն տեղում:

ունի ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական կարեւոր (լշանակություն, քանզի արդիականության եւ հրատապության առումով այդ գնահատականն իր մեջ բովանդակում է իրական ու քանական հատիկ: Չէ՞ որ այսօր միջպետական հարաբերությունների համակարգում Դաշնության ու համագործակցության գաղափարը հանձին Եվրոպական Միության, Եվրախորհրդարանի զգալի չափով նյութականացվել է եւ իրագործվել քաղաքակիրթ երկրների կողմից: Դաշնության սկզբունքը հատկապես կարեւորվում է ներկայիս հայ-ռուսաց միջպետական ռազմաքաղաքական առնչություններում: Արդ, երբ Հայաստանի Հանրապետությունը դարձել է միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, իսկ Հայկական Հարցը, Սեծ Եղեռնը համաշխարհային դիվանագիտության ոլորտում դադարել է վերջապես սոսկ օբյեկտ լինելուց եւ դարձել է սուբյեկտ, Դաշնության գաղափարը ստեղծված իրադրության մեջ սկզբունքորեն նոր երանգավորմամբ լիովին համապատասխանում է Ռուսաստանի եւ Հայաստանի ազգային-պետական շահերին: Ինչեւիցէ, միանգամայն իրատես էր Կովալենսկու դատողությունը, ապացուցված պատմության զարգացման ռոջ ընթացքով՝ փոքրաթիվ ժողովուրդները միջազգային քաղաքական կյանքում, միջպետական հարաբերությունների համակարգում, կարող են գոյատևել, որեւէ դրական դեր խաղալ, նպաստել քաղաքակրթությանը գերազանցապես նրանց միջեւ հաստատված Դաշնության հիմքի վրա, համագործակցության շրջանակներում:

Հայ ժողովրդի հանդեպ կազմակերպված մեծ դավադրության ժամանակ 1915 թ. Կովալենսկին պատմության, մշակույթի, գրականության հիմնախնդիրներին նվիրված ռուսաց հանրաճանաչ ամսագրում¹ հանդես եկավ "Армянский Вопрос" հոդվածով ու դրանով իսկ բողոքի ձայն բարձրացրեց թուրքերի կողմից իրականացվող չարագործությունների դեմ: Հոդվածագիրը ներկայացնում է Հայկական Հարցի հետ կապված առանձին հիմնախնդիրների ամբողջական համալիրը եւ այդ առումով ուշադրությունը սեւեռում ռուս-թուրքական պատերազմների ընթացքում ռուսաց բանակին հայ ժողովրդի օգնության պատճառների եւ հետեւանքների, հյուսիսային

¹ "Вестник Европы", Петроград, 1915 г., № 6, с. 256-274

քրիստոնյա տերության նկատմամբ ունեցած ակնկալիքների, Հայկական Հարցի շուրջ մեծ տերությունների ծավալած դիվանագիտական պայքարի, Ռուսաստանի արտաքին քաղաքականության նպատակների, հայկական կոտորածների վրա եւ իր համերաշխությունը հայտնում Օսմանյան կայսրության բիրտ յաթաղանի գոհ դարձած ու բնաջնջման եզրին կանգնած արեւմտահայերին: «Ռուսական գործերը Հայաստանում հանդիպում էին,- գրում է նա,- գրկաբաց ընդունելության, բազմատեսակ եւ էական օգնության»:¹ «Նրանցից (հայերից -Մ.Մ.) թուրքերը,- ճիշտ եզրակացություն է կատարում Կովալեւսկին,- դրա համար վրեժխնդիր էին լինում: Հայերը անագորույն կերպով պատժվում էին մեր հանդեպ ունեցած իրենց անկեղծության համար»:² Պատմականորեն լիովին ընդունելի տեսակետ եւ անաչառ կարծիք, միայն մի վերապահմամբ՝ թուրքական կառավարող շրջանների դարերի ընթացքում պարբերաբար կենսագործվող դաժանությունները արեւմտահայության եւ ընդհանրապես հայ ժողովրդի նկատմամբ պայմանավորված էր ազգային-կրոնական գործոններով, պետականության վերականգման, սեփական հայրենիքում տնօրինելու, ազատ եւ անկախ ապրելու նրա հետեւողական ձգտման հանգամանքներով: Ուշագրավ է եւ թերեւս ոչ պակաս իրատես Կովալեւսկու գնահատականը Սան-Ստեֆանոյում ու Բեռլինի վեհաժողովում Հայաստանին վերաբերվող 16-րդ եւ 61-րդ կետերի մասին, քանզի նա քաջ պատկերացնում է, թե ինչու, այնուամենայնիվ, այդ հոդվածները մնացին սոսկ թղթի վրա, առանց որեւէ էական նշանակության: «Թուրքիան,- մատնանշում էր նա,- կարողանում էր ձեռական գրությամբ օձիքն ազատել, իսկ եվրոպական տերություններն իրենց պահանջների մեջ չդրսեւորեցին հետեւողական հաստատականություն: Կարելի է նույնիսկ ասել, որ Բեռլինի պայմանագիրը հանգեցրեց հայերի ճակատագրի վատթարացմանը»:³ Այդպիսի եզրահանգումը ուղղակի պատիվ է բերում նրան, քանզի հայ պատմագրությունը եւ հասարակական-քաղաքական միտքը Բեռլինի վեհաժողովի

¹ "Вестник Европы", Петроград, 1915 г., №6, с. 256-257.

² Նույն տեղում, էջ 257.

³ Նույն տեղում:

արեւմտահայերին վերաբերվող հողվածի վերաբերյալ ելակետ ունէր նման տեսակետ:

(Սամանյան կայսրությունում կենսագործվող հայակուլ քաղաքականությունը բռնությունների, դաժանությունների, բալթարոտությունների ու վերջապես պարբերաբար կազմակերպվող կոտորածների առումով իր բարձրակետին հասավ Աբդուլ Համիդ 2-րդի օրոք եւ երիտթուրքական իշխանության տարիներին մի կարեւորագույն պատմական փաստ, որը նույնպես չի վրիպել ռուս հետազոտողի տեսադաշտից: Կովայեւսկու իրատես կարծիքով կոտորածները հետապնդում էին հայկական բնակավայրերի խտությունը մոսրացնելու նպատակ, ահա ինչու արդուլհամիդյան վարչակարգը կազմակերպում, հովանավորում ու խրախուսում էր այդ ոճիրները քողերի եւ չեքեզների միջոցով: Հեղինակավոր հողվածագրի ընդունելի տեսակետով 90-ական թթ. արեւմտահայության կոտորածների մեջ գլխավոր դահիճ Աբդուլ Համիդի հետ մեղսակից էր նաեւ ֆրանսիական եւ ռուսաց դիվանագիտությունը, երկու երկրների արտգործնախարարներ Հանատոն ու Լոբանով-Ռոստովսկին, որոնք ժամանակին անհրաժեշտ քայլեր չձեռնարկեցին, որպեսզի անհնարին դարձնեն այդ արյունոտ խրախճանքը: «Այդ ժամանակ,- գրում է Կովայեւսկին,- Լոբանով-Ռոստովսկուն էին վերագրում ավելի քան չնտածված «Ռուսաստանը ցանկանում է ձեռք բերել Հայաստանը առանց հայերի» դատարկախոսությունը»:¹ Այդպիսի քաղաքականության գլխավոր պատճառն այն էր, որ հայերը, ըստ հեղինակի, այն ժամանակ համարվում էին յուրատեսակ հեղափոխական թխմոր Կովկասում: «Կառավարությունը չէր ցանկանում ավելացնել նրանց թիվը եւ նրանց համար գծովել Թուրքիայի հետ»:² Կովայեւսկու տեսադաշտից բնականաբար չի վրիպել Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինի ժամանակ Անդրկովկասի հայության նկատմամբ ռուսաց կառավարության կենսագործած քաղաքականությունը, որը, հեղինակի կարծիքով, ծանր է անդրադառնում նաեւ արեւմտահայության կացության վրա, քանզի վերջիններս մնում էին անպաշտպան իրենց դարավոր

¹ "Вестник Европы", Петроград, 1915 г., №6, с. 258.

² Նույն տեղում:

կեղեքիչներից:¹ Այս իմաստով միանգամայն իրավացի է ռուս հետազոտողը, երբ երիտթուրքերին անվանում է նեղ ազգայնամոլականներ, ուստի եւ սին էին այն ենթադրություններն ու հույսերը, թե նրանց իշխանության գլուխ անցնելուց հետո վերջապես կդադարեն արեւմտահայության հանդեպ հալածանքները: Սրանք նույնիսկ անընդունակ գտնվեցին իրագործել Բեռլինի դաշնագրով նախատեսված բարենորոգումները Արեւմտյան Հայաստանում: Նա եւս, Ադանայի կոտորածը նկատի ունենալով, եզրակացնում է, որ երիտթուրքերը Հայկական Հարցում դարձան արդուլիամիդյան վարչակազմի իսկական ժառանգները: Դրան հակառակ ռուսաց կառավարությունը, ճիշտ նկատում է Կովալեսկին, հրաժարվեց հայկական եկեղեցու դեմ պայքարելուց եւ վերադարձրեց նրան պատկանող հողերը եւ եկեղեցական դպրոցների տնօրինությունը, վերստին իր վրա վերցնելով հայերին պաշտպանելու դերը:

Հոդվածագիրը նշում է, որ ինքը հանդիպում է ունեցել Նուբար փաշայի հետ, նրան «Էջմիածնի Հայոց կաթողիկոսը հանձնարարել էր հարաբերությունների մեջ մտնել ֆրանսիական իշխանությունների հետ եւ համոզել նրանց ավելի գործունակ պաշտպանել Թուրքիայի հայերին: Նուբար փաշան պատրաստվում էր Լոնդոնի համահայկական համագումարին, հրավիրում էր ինձ մասնակցել դրան, որի մասին միաժամանակ խնդրել էին Պետրոգրադի հայության առանձին ներկայացուցիչներ: Ես անհրաժեշտ համարեցի հայ հայրենասերների համագումարին հղել իմ անկեղծ համակրանքի արտահայտությունը նրանց գործին եւ արտահայտվեցի Թուրքիայի կողմից խոստացված բարենորոգումների շուտափույթ անցկացման օգտին»:² Փարիզում գտնվելու ժամանակ Պողոս Նուբար փաշան հանդիպում ունեցավ Ռուսաստանի դեսպան Իզվոլսկու հետ ու նրան հայտնեց, որ արեւմտահայերը չեն ցանկանում բարձրացնել ինքնավարության կամ հպատակությունը փոխելու հարցը, այլ խոսում են միայն Բեռլինի դաշնագրով նախատեսված բարենորոգումների իրագործման

¹ "Вестник Европы", Петроград, 1915 г., №6, с. 258.

² Նույն տեղում:

մասին:¹ Հայկական Հարցի լուծման ծախողումը, ըստ նրա, պայմանավորված էր ոչ միայն մեծ տերությունների միջեւ ընթացող անմախաղեպ մրցակցությամբ, հակամարտությամբ եւ նրանց ուղղակի փառիսեցիությամբ, այլեւ այն կարեւորագույն պատճառով, որ «Անգլիան ու Ֆրանսիան իրենց հերթին մահանջում են շատ գործուն ներկայացուցչության մտքից, չցանկանալով դժգոհություն առաջացնել իրենց գաղութների մահմեդական բնակչության շրջանում, որոնց համար սուլթանը առաջվա պես մնում է ուղղահավատ մահմեդականների ղեկավար»:² Կովալեսկին եւս նշում է, որ պատերազմը բարենպաստ պայմաններ ստեղծեց երիտթուրքական կառավարության համար Հայկական Հարցը արդուլիամիդյան տարբերակով լուծելու համար: Եւ պատերազմը սկսվելուց տասը ամիս անց տեղի ունեցան հայերի նոր կոտորածներ, որոնք խիստ դժգոհություն առաջացրեցին Թուրքիայի դեմ պատերազմող երկրների հասարակության շրջանում, ուստի եւ ռուս պատմաբանը միանգամայն օրինաչափ է համարում Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի 1915 թ. մայիսի 13-ի (Կովալեսկին սխալվում է, դաշնակիցները հանդես են եկել համատեղ հայտարարությունը մայիսի 11-ին -Մ.Մ.) հայտնի հայտարարությամբ, որտեղ նշվում էր. թե «Թուրքիայի պաշտոնական անձինք, չբացառելով նաեւ մինիստրներին, կկրեն արժանի պատիժ իշխանության չարաշահման համար եւ այն ջարդի համար, որ նրանք ենթարկում են հայ բնակչությանը»:³ Ավելացնենք մի կարեւորագույն միջազգային քաղաքական նշանակության փաստ, որը դուրս է մնացել նշանավոր գիտնականի տեսադաշտից: Մեծ տերություններն իրենց պաշտոնական հայտարարության մեջ Հայոց Ցեղասպանությունը առաջինը որակեցին որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, որը եւ իրավունք էր տալիս նրանց հայտարարելու երիտթուրքերի պարագլուխներին պատժելու ամխուսափելիության մասին: Ուստի եւ օրինաչափ է, որ վերջում հողվածագիրը հույս է հայտնում, թե Ռուսաստանի եւ նրա դաշնակիցների հաղթանակի շնորհիվ հնարավորություն

¹ "Вестник Европы", Петроград, 1915 г., №6, с. 258.

² Նույն տեղում, էջ 265:

³ Նույն տեղում, էջ 268:

կընձեռվի ինքնավարություն շնորհել արեւմտահայերին, քանզի «Ռուսաստանն անկասկած կարող է միայն շահագրգռված լինել ինքնավար մարզի ստեղծման մեջ»:¹

Թուրքական ոճրագործությունները Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ խստագույնս դատապարտեց նաեւ կաղեւտական կուսակցության նշանավոր գործիչ իշխան Պավել Դուգորուկովը իր «Հայկական Հարցը եւ ռուսաց հասարակությունը» հետաքրքիր ու արժեքավոր հոդվածում, որը տպագրվեց "Армянский Вестник"-ի անդրանիկ համարում, այսինքն այն ժամանակ, երբ երիտթուրքերը սկսել ու շարունակում էին իրենց սեւ գործը, իսկ քաղաքակիրթ աշխարհն արդեն ոչ միայն տեղեկացել էր, այլեւ սկսել էր անարգանքի սյունին գամել արեւմտահայության դահիճներին:

Իրատես է ու օրինաչափ, որ ռուսաց հասարակական-քաղաքական մտքի գրեթե բոլոր ներկայացուցիչները չեն բավարարվել միայն Հայոց Յեղասպանության դատապարտմամբ, այլ, ձգտելով ամբողջական ու սպառնիչ ներկայացնել թուրքական կառավարող շրջանների հանցագործ քաղաքականությունը, անդրադարձել են նաեւ արեւմտահայերի դեմ նախորդ շրջանում վերջիններիս կազմակերպած ոճիրներին: Այս տեսակետից բացառություն չկազմեց Պ.Դուգորուկովի հոդվածը: «Եվրոպան,- գրում է նա,- վրդովված էր Հայաստանում (Արեւմտյան -Մ.Մ.) թուրքական կառավարության կողմից կազմակերպված սարսափելի կոտորածից»:² Հեղինակի իրատես կարծիքով հայկական կոտորածները եւ հատկապես Մեծ Եղեռնը հետետողականորեն կենսագործվող հայաջինջ քաղաքականության արդյունք էր. որը ժառանգաբար որդեգրում էին թուրքական բոլոր իշխանությունները: Նրա միանգամայն ընդունելի տեսակետով ո՛չ արդուլիամիդյան եւ ո՛չ էլ երիտթուրքական ջարդարարական քաղաքականությունը կասկած չի հարուցում, այն մասնավորապես ապացուցված է Արեւմտյան Հայաստանից անցլիական դեսպանատուն հասցված ֆոտոնկարներով՝ հայերի դիակների կույտեր, կանանց ու երեխաների խոշտանգված մարմիններ: Դուգորուկովի հոդվածը կարեւորվում է ոչ միայն

¹ "Вестник Европы", Петроград, 1915 г., №6, с. 258.

² "Армянский Вестник" 1916; №1, стр. 3.

պատմագիտական, այլեւ քաղաքական առումով, քանզի այն չի սահմանափակվում թուրքական ոճրագործությունների խստագույնս դատափետմամբ, այլ, դուրս գալով այդ շրջանակներից, թեւ հակիրճ, բայց բավականին տարողունակ վերլուծության է ենթարկում հայկական գործոնի դերը Ռուսաստանի արտաքին քաղաքականության լայնածավալ համակարգում: Նա չի տարակուսում, թերեւս, ավելին, խորապես համոզված է, որ Ռուսաստանի առարկայորեն հայանապատ քաղաքականությունը լիովին իրատես է, համահնչուն պետության շահերին: Այս կտրվածքով մոտենալով հիմնախնդրին, կադետական կուսակցության ճանաչված գործիչը քննադատում է Պլեվե-Գոլիցինի մեղմ ասած տխրահռչակ հայահալած քաղաքականությունը, դրան հակադրելով Կովկասի նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովի հայասիրությունը: Ռուսաստանի առարկայորեն հայանապատ քաղաքականության կենսագործման անհրաժեշտությունը հենց իր իսկ կայսրության շահերի տեսանկյունից Դոլգորուկովը հիմնավորում է պատմաքաղաքական բնույթի անաչառ գործոններով: «Եւ ազգագրական, եւ աշխարհագրական տեսանկյունից Թուրքահայաստանը (Արեւմտյան Հայաստանը - Մ.Մ.) եվրոպական ցանկացած երկրից ավելի շատ է կապված Ռուսաստանի հետ ու վերջինիս է ձգտում հենց նաեւ քաղաքական առումով»:¹ Հիմնահարցը քննարկելով պատմաքաղաքական այս լույսի ներքո ու արտահայտելով ռուսաց հասարակական-քաղաքական մտքի առանձին ներկայացուցիչների ցանկությունները, Դոլգորուկովը նշում էր, որ «Թուրքահայաստանը (Արեւմտյան Հայաստանը - Մ.Մ.) պետք է դառնա ինքնավար միավոր: Ռուսաստանի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական հետաքրքրությունները միայն կշահեն, եթե նա կովկասյան հարավային սահմանում կազմավորի Ռուսաստանին նվիրված ինքնավար Հայաստան»:² Այդ ծրագրի իրագործումը հեղինակի կարծիքով միանգամայն հնարավոր է, որովհետեւ ռուս-թուրքական ռազմաճակատում հաստատված իրադրությունը ստեղծել էր դրա համար բարենպաստ պայմաններ, չէ որ «այժմ Հայաստանի

¹ "Армянский Вестник", 1916; №1, с. 3.

² Նույն տեղում:

ազատագրումը թուրքական լծից նվաճված է սրով ու արյամբ, ազատագրում, որը, պետք է հուսալ, լիակատար է ու վերջնական»:¹ Հետեւաբար, Դուզորուկովը, նկատի ունենալով ռուսական բանակի հաղթարշավը, խոր համոզվածությամբ կանխագուշակում էր, որ պատերազմի ավարտից հետո, երբ արդեն ձախողված կլինեն Փոքր Ասիայի նկատմամբ եղած գերմանական ծրագրերը, կջախջախվի Գերմանիայի ազդեցության տակ ընկած Թուրքիան, այնժամ միջազգային դարձած Հայկական Հարցը կկանգնի ամբողջ հասակով եւ նրա արդարացի լուծման համար ցանկալի է, որպեսզի ռուսաց հասարակությունն արդեն գիտակցորեն վերաբերվի հիմնախնդրին, քանզի այստեղ վճռական խոսքը պատկանում է Ռուսաստանին: Դուզորուկովը հրատապ անհրաժեշտություն է համարում Մոսկվայում հիմնադրել ռուս-հայկական ընկերություն, որովհետեւ, նրա համոզմամբ, անհրատես է այս հիմնահարցում նախաձեռնությունն ամբողջովին նախապատվել Նյու Յորքի, Փարիզի, Լոնդոնի կոմիտեներին, առավել եւս հայ-գերմանական լիգային:² Նրա կարծիքով Ռուսաստանի գերակայությունն ու առաջնությունը սույն հիմնախնդրում եւ՝ առարկայական է, եւ՝ իրատես, քանզի ողջ հայության մոտ կեսը ապրում է Արեւմտյան Հայաստանում, իսկ մյուս կեսը (ավելի քան 2 մլն.)՝ Ռուսաստանում:³ Դուզորուկովը նշում է հավանաբար քիչ հայտնի, գրեթե չուսումնասիրված, բայց պատմագիտական հետաքրքրություն, թերեւս հրատապություն ներկայացնող փաստ. դեռեւս նախապատերազմյան տարիներին ժողովրդական ազատության (կադետական) կուսակցության ԿԿ Մոսկվայի բաժանմունքին կից ազգային հանձնաժողովը գումարեց ընդլայնված խորհրդակցություն հայկական համայնքի նշանավոր ներկայացուցիչների, հասարակական ու ֆինանսական գործիչների հետ, որտեղ ցանկություն հայտնվեց Մոսկվայում ստեղծել ապակուսակցական ռուս-հայկական ընկերություն, որպիսիք արդեն գոյություն ունեին արտասահմանում եւ որը հիմնականում պիտի

¹ "Армянский Вестник", 1916; №1, с. 3.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

մմանվեր Լոնդոնի Հայկական կոմիտեին:¹ Բայց այդպիսի
 ընկերություն չստեղծվեց, իսկ դրա պատճառների մասին
 հեղինակը ոչինչ չի ասում, պարզապես մնում է կռահել, որ
 խանգարեց սկսված աշխարհամարտը: Ընդհանրապես
 հեղինակը դրվատանքով է խոսում ու գնահատում եվրոպացի
 հայասերներին՝ «մեծ ծերուկ» Գլադստոնին, “Pro Armenia”
 ամսագրի հիմնադիր Կիլյարին, նրա գործընկերներ
 Պրեսսանսին, Բերարին հայ ժողովրդին, Հայկական Հարցին
 սատար կանգնելու համար, որոնք իրենց գորեղ ձայնը
 բարձրացրին թուրքական հայակույլ քաղաքականության, պար-
 բերաբար կազմակերպված հայոց ջարդերի ու կոտորածների
 դեմ: Ճշմարիտ է իշխան Դոլգորուկովը, Ռուսաստանն այս
 հարցում զգալիորեն զիջում էր Արեւմտյան Եվրոպային, որտեղ,
 ինչպես նշվեց. ի պաշտպանություն հայ ժողովրդի, գործում էին
 զանազան ընկերություններ՝ Գերմանիայում այն ստեղծել էր
 նշանավոր հասարակական գործիչ ու հայասեր Յոհաննես
 Լեփսիուսը: Բայց, ըստ հոդվածագրի, այս ուղղությամբ մեծ գործ
 էր կատարվել Անգլիայում, որտեղ ոչ միայն հրատարակվում էր
 “Ararat” թերթը, այլև անգլիական պառլամենտը բազմիցս իր
 հեղինակավոր ձայնն էր հնչեցնում ի նպաստ հայերի, իսկ
 բրիտանական կառավարությունը ճնշում գործադրում
 Թուրքիայի վրա:² Իհարկե, հեղինակը իրավացի էր, երբ
 գովաբանում էր եվրոպական երկրների պետական քաղաքական
 ու հասարակական գործիչների հայանպաստ
 հայտարարությունները, նա, հավանաբար, ելնելով ստեղծված
 ընթացիկ ռազմաքաղաքական պահից, գիտակցաբար անտե-
 սում էր մեծ տերությունների կենսագործած դիվանագիտության
 մութ ծալքերը եւ խաղերը հայկական հիմնահարցի շուրջ:
 Մինչդեռ իրականում մեծ տերությունների, հատկապես
 Անգլիայի ու Ռուսաստանի քաղաքականությունը եւ դիվանա-
 գիտական դիրքորոշումը Հայոց հարցում, եթե անտեսենք նրանց
 1915 թ. մայիսի 11-ի (24-ի) պաշտոնական համատեղ
 հայտարարությունը, գրեթե միշտ եղել է իրարամերժ ու
 հակամարտող, որի հետեւանքով ոտնակոխ էին արվում հայ
 ժողովրդի օրինական իրավունքները եւ ակնկալիքները, իսկ

¹ “Армянский Вестник”, 1916; №1, с 3

² Նույն տեղում:

քուրքական կառավարող շրջանները, օգտվելով առիթից, իրական էին դարձնում իրենց ծրագրերը՝ Հայոց Յեղասպանությամբ փորձում արմատապես «լուծել» Հայկական Հարցը։ Այդ է աներկբայորեն վկայում Հայոց հարցի քաղաքական ու դիվանագիտական ամբողջ պատմությունը՝ Բեռլինի վեհաժողովից մինչև Սեւրի պայմանագիրը եւ Լոզանի խորհրդաժողովը։ Ի վերջո իշխան Դուզորուկովը, ելնելով Սասունում եւ Ջեթունում 90-ական թթ. հայկական կոտորածներից, Ադանայի ջարդերից ու հատկապես Հայոց Մեծ Յեղասպանության ահավոր ծանր հետեւանքներից, եզրակացնում է, որ ջախջախված, արյունով հեղեղված, մորթոտված, դժբախտ Հայաստանին նյութական օգնությունը կարելուրագույն խնդիր էր ու բարոյական պարտականություն, որն ընկած է ինչպես ռուսաց հասարակության, այնպես էլ Ռուսաստանի հայության վրա։¹

Երիտթուրքերի աներեւակայելի չարագործության՝ Հայոց Յեղասպանության դատապարտման գործում առաջին շարքերում ընթանում էր ռուս մտավորականությունը։ Նրա ճանաչված դոկտրակակիրը եղավ ականավոր բանաստեղծ, հայ ժողովրդի մեծ ու անկեղծ բարեկամ Վ.Բրյուսովը, որի հրապարակային դասախոսությունները եւ ելույթները հայկական քնարերգության մասին, իհարկե դուրս էին գալիս գուտ գրականագիտական բնույթի շրջանակներից ու բովանդակում խորապես քաղաքական իմաստ։

Ա.Մ.Գորկու պատկերավոր արտահայտությամբ «Ռուսիայի ամենակուլտուրական գրողը»՝ Վ.Բրյուսովը Մեծ եղեռնագործությունից հետո որպես բողոքի եւ արեւմտահայության բարոյական աջակցության ու նրա հետ համերաշխության նշան 1916 թ. մարտի 25-ին Մոսկվայի համալսարանի շենքում ռուսաստանյան գրասիրաց ընկերության ժողովում պրոֆ. Ա.Գրուզինսկու նախագահությամբ կարդաց «Հայ միջնադարյան քնարերգուները» թեմայով դասախոսություն։ Այն ուղեկցվում էր հայ քնարերգուների բանաստեղծությունների Բրյուսովյան դասական թարգմանություններով, իսկ մտքերի փոխանակությանը մասնակցեցին պրոֆ. Գրուզինսկին,

¹ "Армянский Вестник", 1916; №1, стр. 3.

Յու.Վեսելովսկին եւ ուրիշներ: Մեծ է հատկապես նրա ծառայությունը հայ ժողովրդի հազարամյա մշակույթի ու բազմահարուստ պոեզիայի տարածման եւ մասսայականացման գործում: Այդ առումով կարեւորվում են մեծանուն բանաստեղծ հայասերի դասախոսությունները կարդացված Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Մոսկվայում, Պետերբուրգում, որոնք լայն արձագանք գտան ոչ միայն հայ հասարակության շրջանում, այլեւ ուրջ Անդրկովկասում: Այս ամենից հետո Վ.Բրյուսովը գրեց. «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը» պատմագիտորեն հետաքրքիր ու քաղաքական առումով հրատապ աշխատությունը: Նրա հրապարակային դասախոսություններն ու ելույթները, առանձնապես գիրքը, ըստ էության ուղղված էր սարսափելի չարագործությունների դեմ, հնչեղ կոչ էր ուղղված համայն մարդկությանը, քաղաքակիրթ աշխարհին օգնության ձեռք պարզելու քաղաքական եւ ֆիզիկական օրհասական օրեր ապրող արեւմտահայերին: «Հայ ժողովուրդը,- գրում է նա,- հնագույններից մեկն է ժամանակակից կուլտուրական ժողովուրդների մեջ: Նա մեր աշխարհ է եկել այնպիսի հեռավոր հնությունից, երբ դեռեւս ոչ միայն գոյություն չունեին ժամանակակից եվրոպական ժողովուրդները՝ ֆրանսիացիները, իտալացիները, անգլիացիները, ռուսները, այլեւ պատմության ասպարեզ հագիվ էին հանդես եկել անտիկ աշխարհի հնագույն ժողովուրդները՝ հռոմեացիներն ու հելլենները»:¹ Հեղինակի միտքը ավելի քան պարզ է, որոշակի ու հստակ՝ անհրաժեշտ է կանխել այդ ոճրագործությունները, փրկել մի ժողովրդի, որը, ըստ էության, մարմնավորում էր ու խորհրդանշում քաղաքակրթությունը: Վ.Բրյուսովը հնարավորություն չունեցավ օգտագործել 1915 թ. հրատարակված Հայկական Հարցի բարենորոգումներին վերաբերող «Կապույտ գրքում» ամփոփված հիրավի սարսափելի փաստերը, աննկարագրելի դաժանությունները, այնուհանդերձ նա քաջատեղյակ էր այն ամենին, ինչ հայության հանդեպ սառնասրտորեն կատարեցին երիտթուրքեր անունով հանցագործները: «Ինչ էլ չասեն թուրքերի պաշտպանները,- մատնանշում էր մեծանուն

¹ В.Брюсов. Летопись исторических судеб армянского народа. Ереван, 1940, стр. 17.

բանաստեղծը,- ինչքան էլ չհենվեն «պետական անհրաժեշտության» փաստարկների վրա, ոչինչ չի կարող արդարացնել մասսայական սպանությունները, ամբողջ նահանգների ամայացումները, քաղաքների ու գյուղերի բնակչությանը սովամահության դատապարտելը»:¹ Սա վերին աստիճանի արդիական, հրատապ նշանակության խորիմաստ եզրահանգում է: Նման իրատես գնահատական կարող էր տալ պատմական փաստերի խորագիտակ, երիտթուրքերի քաղաքականությունը արեւմտահայության նկատմամբ հստակ պատկերացնող, անաչառ, հումանիստ մտածող գործիչը: Բրյուսովի այս տեսակետը ոչ միայն հրատապ է, այլև պատմական, քանզի այն պսակագերծելով երիտթուրքերի ոճրագործությունները միաժամանակ ճեղքեց ժամանակի մշուշապատ ու թանձր մթնոլորտը, նախահիմքեր ստեղծեց երիտթուրքերի ժառանգների ու հաջորդների, նրանց կեղծ փաստաբանների սին փաստարկները հերքելու համար: Չէ որ Հայոց Մեծ Ցեղասպանության դահիճներից մեկը՝ տխրահռչակ Թալեաթը կատարված ոճրագործությունից անմիջապես հետո Կ.Պոլիսի “Berliner Tageblatt”-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ ասաց. «Հայերը ձգտում են օսմանյան կայսրության կործանմանը: Պատերազմի սկզբին ռուսական (արեւելահայ - Մ.Մ.) ու թուրքական (արեւմտահայ - Մ.Մ.) հայերի խորհրդակցությունը որոշեց, որ Կովկասի հայերը կպայքարեն Թուրքիայի դեմ, իսկ Անատոլիայի հայերը կսպասեն ռուսական զորքերի մուտքին Անատոլիա: Խուզարկությունները հայերի մոտ հայտնաբերեցին ռումբեր եւ զենք: Անհրաժեշտ էր հեռացնել խռովարարներին սահմանային շրջակայքից: Հետագայում, երբ դարդանելյան օւլերացիայի պատճառով ուզում էին կառավարությունը փոխադրել Էսքի-Շեհիր, վերջինիս ու Կ.Պոլսի միջեւ ընկած շրջաններից արտաքսեցին հայերին: Առաջին իսկ կոտորածի ժամանակ թուրքական ուղեկցորդ պահակախումբը պաշտպանում էր հայերին քրդերից, որոնց առաջնորդները հետո կախաղան հանվեցին: Երկրորդ դեպքում մեղավոր են վատ չինովնիկները»:² Թալեաթ բեյը, ամփոփում է թղթակիցը, տխրել էր աղետալի իրադարձություններից, սակայն

¹ В.Брюсов. Летопись исторических судеб арм. народа, стр. 17

² “Армянский Вестник”, 1916, №14, стр. 7

հայրենիքի բարօրությունը արդարացնում է դրանք: Առանձնացնել անպարտներին չէր կարելի՝ նրանք հենց վաղը կարող էին դառնալ հանցավորներ:¹

Ահա հենց այս եւ նման բազում կեղծ փաստարկներին հակադրեց հայ ժողովրդի մեծ բարեկամն իր հնչեղ, գորեղ պսակագերծող ձայնը: «Բոլորովին էլ անիրական չէ...որ ժամանակակից պատերազմի սկզբին թուրքական շրջաններում մահապատիժներից, սպանություններից, սովից, հյուծումներից, հրդեհներում, տարագրման ճանապարհին, բնակության համար նախորոշված անապատներում.. զոհվեց հայ բնակչության ավելի քան 1 մլն. մարդ (այլ աղբյուրներ վկայում են մինչեւ 2,000,000 մարդ)»: ² Հետեւաբար Վ.Բրյուսովը փաստորեն ռուսաց հասարակական-քաղաքական մտքի ու մտա-վորականության առաջին ներկայացուցիչներից է, որը նշեց իրականությանը մոտ տվյալներ երիտթուրքերի կողմից խոշտանգված արեւմտահայերի զոհերի մասին: Չէ որ նա իր գիրքը գրել է հայ ժողովրդի քաղաքական պատմության ամենամոայլ, օրհասական պահերին, ուստի եւ պատ-մաքաղաքական առումով միանգամայն օրինաչափ է ճանաչված հումանիստի ու քաղաքացու մտավախությունը աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի ճակատագրի նկատմամբ: Ի՞նչ է սպասում քաղաքական ծանրագույն կացության մեջ գտնվող հայ ժողովրդին: «Արդեն մոտ ապագան,- կատարում է իրատես եզրակացություն Վ.Բրյուսովը,- պետք է ցույց տա, թե չափից ավելի այդ փորձություններն ինչով կվարձահատուցեն Հայաստանին քաղաքական անկախության վերականգնմա՞մբ, հայկական շրջաններից ֆեդերատիվ միավորի ստեղծմա՞մբ, նրանց ինքնավարությա՞մբ, թե՞ միայն ազգային կառուցվածքի նոր մասնատմամբ»: ³ Այս առարկայական հարցադրումները, թերեւս, վերստին վկայում են, թե որքան էր նա քաջատեղյակ հայոց խնդրին, արեւմտահայության դժնդակ իրավիճակին, հայ ժողովրդի դարավոր ակնկալիքներին, ռուսաց դիվանագիտության դիրքորոշմանը Հայկական Հարցում: Հայտնի է, որ Արեւմտյան Հայաստանի վերաբերյալ կայսերական

¹ "Армянский Вестник", 1916, №14, стр. 7.

² В.Брюсов. Летопись исторических судеб арм. народа, стр. 17.

³ Նույն տեղում.

Ռուսաստանի կառավարող շրջանների մշակած ծրագրերը, կեղծ, թե իրավ, նախատեսում էին արեւմտահայերի համար կամ ինքնավարություն կամ հայկական տարածքներից մեկ միասնական նահանգի ստեղծում, որը հիմնականում ժառանգեց ժամանակավոր կառավարությունը իր արտաքին քաղաքական գործունեության մեջ: Այս հանգամանքը հավանաբար նկատի ուներ Վ.Բրյուսովը, երբ հանդես եկավ մման հարցադրումներով:

Կովկասում 1916-1917 թթ. Ռուսաստանի համար ստեղծված ակնհայտ ռազմաքաղաքական բարենպաստ իրադրությունը համապատասխանաբար մեծացնում էր հետաքրքրությունը Արեւմտյան Հայաստանի նկատմամբ, նպաստում, որպեսզի ուշադրությունը սեւեռվի արեւմտահայերի հանդեպ, նոր թափով ու ավելի ուժգնորեն դատապարտվեն թուրքական ռճրագործությունները, իրատես դարձնում ինքնավարության գաղափարը:

Ինքնակայության տապալումից հետո Ռուսաստանի արտգործ նոր նախարար Պ.Ն.Միլյուկովը պաշտոնապես հայտարարեց, որ ժամանակավոր կառավարությունը հավատարիմ է դաշնակիցների հետ Ռուսաստանի կնքած բոլոր պայմանագրերին, կձգտի հետետղականորեն իրագործել պատերազմում հետապնդած իրենց նպատակները: Դա հատկապես վերաբերում էր նեղուցներին ու Արեւմտյան Հայաստանի հիմնահարցին, որոնց նկատմամբ նոր իշխանությունը ցուցաբերում էր առանձնահատուկ ուշադրություն:

Այս տեսակետից հիշարժան է 1917 թ. ապրիլի 26-ին հրապարակված ժամանակավոր կառավարության վարչապետ իշխան Լվովի ու արտգործնախարար Միլյուկովի ստորագրած հրովարտակը, որով մինչեւ հաշտության դաշնագրով պատերազմի օրենքներով գրավված մարզերի համար կարգավիճակի վերջնական որոշումը, Արեւմտյան Հայաստանի համար հաստատվեց ժամանակավոր կարգավիճակ: Արեւմտյան Հայաստանի տարածքում քաղաքացիական կառավարման տեսակետից վերացվում էր կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների տնօրինությունը եւ հանձնվում էր ժամանակավոր կառավարության անմիջական տնօրինությանը: Ժամանակավոր կառա-

վարությունը 1917 թ. մայիսի 15-ին Արեւմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսար նշանակեց գեներալ Պ.Ավերյանովին, իսկ քաղաքացիական հարգերի գծով օգնական նշանակվեց հայտնի հասարակական գործիչ, բժիշկ Հակոբ Ջավրիյանը: Այս ամենը հնարավորություն էր ընձեռում Ռուսաստանի հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներին լինելու Արեւմտյան Հայաստանում եւ անձամբ տեսնելու այն ոճրագործությունները, որոնք կատարել էին երիտթուրքերը արեւմտահայության նկատմամբ:

Հայ ժողովրդի ողբերգության ականատեսներից էր նաեւ ռուս նշանավոր արեւելագետ-թուրքագետ Վ.Ա.Գորդլեւսկին: Նա որպէս զինվորական թարգման հնարավորություն է ստանում մեկնելու Կովկասյան ռազմաճակատ ու լինելու օսմանյան կայսրության հյուսիս-արեւելյան շրջաններում՝ Արեւմտյան Հայաստանում: Առանձնապէս պատմագիտական եւ քաղաքական մեծ արժեք ունեն նրա «Սուլթան Համիդ 2-րդը՝ բռնակալ եւ կալանավոր», «Այնտեղ, ուր հնում ապրում էին հայերը», «Հայերը եւ պատերազմը», «Էրզրում», «Թուրքիայի սովերապատկներները» ընդհանուր խորագրով: Գորդլեւսկին իր «Հայերը եւ պատերազմը», «Վան» հոդվածները, որոնք տպագրվեցին հոդվածում նույնպէս խստագույնս դատապարտեց երիտթուրքերի չարագործությունները եւ նրանց գերմանական հովանավորիչների դիրքորոշումը: «Հողը մեկ անգամ չէ ներկվել հայերի արյունով,- գրում է նա,- բայց պատերազմը կոտորածին հաղորդեց հսկայական թափ, կարծես մարդուց ջնջվեցին սանձահարող ծածկույթները եւ մարդը, արհամարհելով աստվածային ու մարդկային օրենքները, ազատություն տվեց հոգու խորքում պատասպարված գազանին: Կրքերը սանձագերծվեցին ամբողջ ուժով: Կոտորածի ժամանակ թուրքերից հետո չէին մնում եւ նրանց քաղաքական բարեկամները՝ գերմանական միլիտարիստները: Համենայն դեպս, ապաստարանը տնօրինող գերմանուհին իշխանություններին էր հանձնում հայերին, որոնք, որպէս քրիստոնյայի, նրա մոտ պաշտպանություն էին փնտրում... Բնակչությունը քաղաքից հեռացվում էր անապատային վայրերը, ավելի հաճախ խուլ կիրճերը եւ այնտեղ կոտորվում կամ դատապարտվում սովամահության: Լինելով Բիթլիսում եւ

համակվեցի այնտեղ կատարված ջարդերի արձագանքներով: Ինչպես պատմում էին տեղական բնակիչները փողոցները, տները, որտեղ ապրում էին հայերը, եկեղեցիները եւ վանքերը լցված էին դիակներով, կանայք սպանված էին բռնաբարությունից հետո, դիակները հաճախ ընկած էին ածխացած, ինչպես «տապալկած խոճկորներ»: Հաճախ որովայնախոռոչը լցված էր ավազով, հյուսերը կտրված էին, կիսափտած կոշիկի մեջ ու անդրաձարտիքում թաքցված էր ոտքը, իսկ շարունակությամբ ընկած էր գանգը, ձեռքերը:

Բիթլիսից այն կողմ, կիրճում, փռված էին դիակների սարեր... Այն սպանդանոց էր, ժողովրդի անօրինակ կոտորած, մարդիկ կարծես կորցրել էին խիղճը, բայց ամոթահար եղավ Եփրատը եւ պողոթկաց արյունոտ արցունքներով... գետը վարարեց արյունից:

Այդպես գոհվեցին ավելի քան մեկ միլիոն հայեր... Եւ եւս հավատում եմ,- կատարում է նա անչափ կարեւոր եզրակացություն,- կանցնի այս ծանր մղձավանջային ժամանակը, եւ ամոթ կլինի մարդուն: Հարյուր հազարավոր անմեղ հայեր թուրքիայում դարձան գազանությունների զոհեր: Մեծագույն խիզախությամբ էին Հայաստանի որդիները գնում մահվան: Նրանք գիտեին, որ մահվան միջոցով հայ ժողովուրդը կվերակոչվի կյանքի, լավագույն կյանքի: Եւ կապրի Հայաստանը»:¹

Գորդլեսկուց համեմատաբար այսքան երկար մեջքերումը, անշուշտ, ինքնանպատակ չէ եւ ոչ էլ պատահական, քանզի այն ի խորոց սրտի խոսք է հայ ժողովրդին, իսկական բարեկամի անկեղծ վշտի ու կարեկցանքի արտահայտություն. խոր համոզմունք, որ հայ ժողովուրդը կհաղթահարի քաղաքական այդ մղձավանջը, հավերժ կապրի Հայաստանը:

Գորդլեսկու վկայությունները պատմագիտական առումով ունեն սկզբնաղբյուրի նշանակություն, որովհետեւ, ինչպես նշվեց, նա եղել է այդ վայրերում, մասնավորապես Բիթլիսում, ականատեսել Մեծ Եղեռնի սարսափները եւ նրա ահավոր հետեւանքները: Նրա անաչառ ու պատկերավոր նկարագրության շնորհիվ թուրք ոճրագործ խուժանը վերստին մեր

¹ Гордлевский В.А. Изб. соч. т. III. История и культура. М. 1962, стр. 130.

առջեւ է կանգնում իր իսկական պիղծ դեմքով, հիշեցնելով իր այսօրվա ոչ պակաս սեւասպան ժառանգին՝ Մումգայիթի, Բաքվի, Արցախի ոճրագործներին. Այո, չարագործ խուժանը մնում է չարագործ խուժան, անկախ տեղից ու ժամանակից:

Ռուս հասարակական մտքի ամենապայծառ դեմքերից մեկը՝ նշանավոր գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ Յուրի Վեսելովսկին իր բազմաբեղուն գործունեությամբ ոչ միայն նպաստեց հայոց պատմության, մշակույթի, հատկապես գրականության, պոեզիայի քարոզմանը, մասսայականացմանը եւ տարածմանը, այլեւ արդուլիստիկյան ու երիտթուրքական ոճրագործությունների դատապարտմանը: Իր հայանպաստ գործունեության ընթացքում նա նախատեսել էր գրել հատուկ մենագրություն «Հայոց հարցը եւ ռուսաց հասարակությունը» խորագրով: Թեեւ այդ մտահղացումը չիրականացավ, այսուհանդերձ նրա թողած ժառանգությունը լիովին բավական է Օսմանյան Թուրքիայի կառավարող շրջանների արյունոտ Վարչակարգը պսակագերծելու, նրանց իսկական նպատակները հայկական հիմնահարցում բացահայտելու համար: Արեւմտյան Հայաստանում 90-ական թթ. կատարված կոտորածներից անմիջապես հետո Յու.Վեսելովսկին ռուսական մամուլում առաջիններից մեկը դատապարտեց այդ ոճիրները եւ դրանով իսկ ռուս ընթերցողին ներկայացրեց քաղաքակիրթ աշխարհից մեծ հեռավորության վրա գտնվող Սասունի եւ Զեյթունի արյունոտ իրադարձությունները: Ինչպես Բյուստովը, այնպես էլ Վեսելովսկին պսակագերծում էին թուրքական իշխանություններին, որոնք իրենց քաղաքական հանցագործությունները փորձում էին «արդարացնել» պետական անիրաժեշտությամբ, իսկ հայերի տեղահանումը պայմանավորել երկրի անվտանգության ապահովման կանխակալմամբ: Այս սովորական գրասենյակային խոսադրության կեղծիքը, որին բազում անգամ ու քանիցս դիմում էին թուրքական իշխանությունները, նպատակ ունեին, իրատեսորեն նկատում է հեղինակը, թաքցնել սեփական ոճրագործության հետքերը, ջրից դուրս գալ չոր, այնժամ, երբ նրանց մեղադրում էին դաժանության եւ անօրինականության մեջ: Իհարկե, չարունակում է Յուրի Վեսելովսկին, չարագործությունները այնքան էին ակնհայտ, որ թուրք դիվանագետներին հնարավոր

չեղավ ապակողմնորոշել որեւէ մեկին: Ավելին, հեղինակը նշում է, որ հայկական կոտորածները Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում իրագործվում էին ծրագրված համաշափությամբ ու պարբերաբար, որոնք իրենց դաժանությամբ գերազանցում էին միմյանց: Այս ամենը լուսաբանված է «Հայերի ճակատագիրը ամերիկյան գրողի պատկերմամբ», «Արեւմտյան Հայաստանի ճակատագիրը», «Հայերի ճակատագիրը եւ աճող ռուսական սերունդը», «Լավագույն օրերի արշալույսին» հրապարակախոսական հոդվածներում:

Յուրի Վեսելովսկին առանձնապես սրտի կսկիծով է արձանագրում այն արհավիրքները, որոնց ենթարկվեցին հայ մանուկները՝ նրանց ողբերգական վիճակը պատկերավոր ձեւով են ներկայացված «Թշվառ երկրամասի զավակները», «Տառապյալ երեխաները (թուրք-հայկական իրականության սարսափների աշխարհից)» աշխատություններում, որոնցում մեկ անգամ եւս բացահայտվում են թուրքական իշխանությունների փարիսեցությունը:

Չէ որ «հեղափոխականների» շրջանում, «որոնց դեմ պայքարում էր թուրքական կառավարությունը, եղել են 10 տարեկանից փոքր երեխաներ, երբեմն ծծկեր երեխաներ, դա հաստատված է բոլոր նրանց ցուցմունքներում, ովքեր չեն կորցրել արդարության ու անաչառության զգացմունքը»:¹

Ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների գնահատականները Հայոց Յեղասպանության վերաբերյալ իրենց նշանակությամբ անանց վկայություններ են, որոնք զալիս են մեկ անգամ եւս ապացուցելու, որ միջազգային հանցագործների ոճրագործությունները չունեն վաղեմության ժամկետ:

¹ "Армянский Вестник", 1917; 39-40, стр. 4.

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹՈՒՄ Է, ԱՐԴԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ՝
ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ, ՄԱՐՍԸ՝ ՃՆՇՎՈՒՄ

Հայոց Ցեղասպանությունն այնքան լայն արձագանք էր գտել ռուսաց հասարակական-քաղաքական մտքի շրջաններում, որ իր անմիջական արտացոլումը գտավ IV Պետական Դումայում, որտեղ երիտթուրքական ռճրագործությունները դատափետող, վառ արտահայտված հայանպաստ ճառերով հանդես եկան Դումայի ազդեցիկ պատգամավոր Պ.Ն.Միլյուկովը եւ հայազգի անդամ Մ.Բաբաջանյանը (Մ.Պապաջանովը): Ավելին, Դումայում Մեծ Եղեռնի արժարժումն արդեն ինքնին վկայում էր, որ Արեւմտյան Հայաստանի հիմնահարցը շարունակում էր առանցքային տեղ գրավել Ռուսաստանի ռազմաքաղաքական ուղեծրում: Ահա ինչու ռուս նշանավոր պետական քաղաքական գործիչ, կադետական կուսակցության ամենաազդեցիկ ղեկավար ու ամառարկելի հեղինակություն, միջազգային լայն ճանաչում վայելող Պ.Միլյուկովը 1916 թ. մարտի 11-ի իր նշանավոր ճառում մատնանշեց պատմական զարգացման գործընթացով բազում անգամ ապացուցված այն ակնհայտ ճշմարտությունը, որի համաձայն հայերը «Ռուսաստանի հնագույն, հավատարիմ բարեկամներն են, ուստի Հայաստանի ճակատագիրը մեզ համար թանկ է ու սրտամոտ ոչ պակաս չափով, քան պատերազմում տուժած այն ժողովուրդների ճակատագրերը, որոնք մարտնչում էին մեզ հետ միասին»:¹ Ահա ինչու ռուսաց զենքի հաղթանակի շնորհիվ պետք է, ըստ հեղինակի, իրականացնել արեւմտահայերին խոստացված ինքնավարությունը, որը նրա իրատես կարծիքով անհրաժեշտ է ու

¹ "Армянский Вестник" 1916; №8, стр. 7.

անխուսափելի մի քանի առումով: Նախ, հայ ժողովրդի բնօրրան հանդիսացող Արեւմտյան Հայաստանի տարածքների մի զգալի մասը պատերազմի իրավունքով արդեն անցել էր Ռուսաստանին ու փաստորեն միակցվել էր կայսրությանը: «Էրզրումի գրավումը հսկայական սպափորություն գործեց ամբողջ մահմեդական աշխարհի վրա, ... ռուսաց զորքերը այժմ կանգնած են տարածքի այն հատվածում, որտեղ հայկական բնակչությունը հատկապես խիտ էր: Ինչպիսին պետք է լինի հաջորդ քայլը, - հարցնում է հռետորը եւ պատասխանում, - այստեղ թերեւս կասկած լինել չի կարող: Ռուսաստանին հավատարիմ լինելու համար տուժած քրիստոնյա բնակչությունը պետք է տեղավորվի իր տեղերում, եւ Ռուսաստանը, հատկապես երբ վիլայեթները զգալի չափով գտնվում են նրա ձեռքին պետք է իրագործի, դեռեւս թուրքական վարչաձեւի ժամանակ խոստացած ինքնավարությունը»:¹ Եթե հիշենք կամ նկատի ունենանք, որ Միլլուկովի ելույթը տեղի է ունեցել 1916 թ., ապա դժվար չէ կոտակել, թե ինչ նկատի ուներ Դումայի նշանավոր ներկայացուցիչը «Ռուսաստանին հավատարիմ լինելու համար տուժած քրիստոնյա բնակչությունը» միտքը նշելիս: Կասկածից վեր է, որ նկատի է առնվում 1915 թ. թուրքական ռմբակոծությունը՝ Հայոց Ցեղասպանությունը: Հատկանշական է, որ Միլլուկովի ելույթը ուղեկցվում էր ծափահարություններով եւ «Կեցցե» ("Браво") բազականչություններով, այլ կերպ ասած կատաղական կուսակցության ճանաչված ղեկավարի մտքերին, գաղափարներին, առաջարկներին համակարծիք էին Դումայի անդամները, որոնք ներկայացնում էին Ռուսաստանի հասարակական-քաղաքական լայն շրջանների տարբեր շերտերին: Դումայի տարանդամ կազմի ու խմբակցության այդպիսի վերաբերմունքը եւ վարքագիծը մեկ անգամ եւս վկայեց պատմաքաղաքական այն ճշմարտությունը, որ առարկայականորեն հայանպաստ դիրքորոշումը լիովին համապատասխանում էր Ռուսաստանի ազգային-պետական շահերին: Եւ միանգամայն օրինաչափ է, որ Միլլուկովի ելույթը լայն արձագանք գտավ ոչ միայն Դումայում ու ռուսաց հասարակության շրջանում, այլեւ արեւելահայության մեջ, ապա նաեւ դաշնակից երկրներում, հատկապես Անգլիայում: Ահա

¹ "Армянский Вестник" 1916; №8, стр. 7.

ինչու արեւելահայ ու գլխավորապես Կովկասի պարբերական մամուլը տպագրեց եւ լայնորեն մեկնաբանեց Միլյուկովի ելույթը՝ նպատակադրվելով հայությանը ծանոթացնել նրա բովանդակության հետ։ Իր հերթին «Армянский Вестник»-ը թարգմանաբար ռուս ընթերցողին ներկայացրեց հայկական մամուլում Միլյուկովի ելույթի կապակցությամբ տված իրատես գնահատականները եւ մեկնաբանությունները։ «Մշակ»-ը գտնում էր, որ Միլյուկովի՝ «Հորիզոն»-ի խմբագիր Միքայել Վարանդյանի խոսքերով ասած կաղեւտական կուսակցության հեղինակավոր ղեկավարի ճառը հայերի համար ունի հսկայական նշանակություն Հայաստանի ապագա ճակատագրի տեսանկյունից։ Եթե այդ հարցի առթիվ, գրում է թերթը, արտահայտվում է ռուս պատգամավորը՝ կոմս Բոբրինսկին, Միլյուկովը կամ Կովալեսկին, այն ունի այլ նշանակություն ու կարող է ունենալ միանգամայն ուրիշ հետեւանքներ։ Միլյուկովը, շարունակում է «Մշակ»-ը, հայ ժողովրդին դասում է այն դաշնակիցների շարքը, որոնք համատեղ հանդես եկան ի պաշտպանություն քաղաքակրթության եւ իրավունքի։ Եւ իզուր չէ, որ ֆրանսիացիները հայերին մույնիսկ անվանեցին իրենց կրտսեր դաշնակիցները։ Միլյուկովը, ամփոփում է «Մշակ»-ի, բնավ էլ դեմ չէ եւ չի կարող դեմ լինել ռուսաց հզոր արծվի ուժի ներքո ինքնավարության հիմնությունը Հայաստանի ազատագրմանը։ Իսկ «Գաղափար»-ի կարծիքով համա-ձայնության տերություններն այժմ ավելի քան երբեք իրենց սրտի մոտ պետք է ընդունեն Հայաստանի ինքնավարությունը։ Դժվար չէ կոտակել, որ հայ հասարակությունը, ելնելով ու գոտեպնդվելով Միլյուկովի ելույթի ոգուց, առաջարկում էր, թերեւս պահանջում, դաշնակիցներից գոնե ինչ-որ չափով վարձահատույց լինել, որեւէ կերպ փոխհատուցել հայ ժողովրդին կրած աննախադեպ արհավիրքի՝ Մեծ Եղեռնի համար, ստանձնել որոշակի պարտավորություններ արեւմտահայության նկատմամբ, քանզի երիտթուրքերը իրենց ոճիրները արդարացնելու համար օգտագործում էին նաեւ հայերի՝ Անգլիային, Ֆրանսիային եւ հատկապես Ռուսաստանին հավատարիմ մնալու, նրանց համակրելու եւ օգնելու պատրվակը։ Հայ ժողովուրդը, հիրավի, առաջին աշխարհամարտում նրանց դաշնակիցն էր եւ

բարոյական, քաղաքական, ռազմական տեսանկյունից լիովին իրավունք ունենալու այդպիսի պահանջներ դնել մեծ տերությունների առջև:

Հետագայում արդեն վտարանդիության մեջ գրած «Հիշողություններ»-ում Միլյուկով տաղանդաշատ պատմաբանը վերստին անդրադարձավ հայկական բարենորոգումներին, Հայոց Ցեղասպանությանը, ուշագրավ էլ հետաքրքիր տեղեկություններ հաղորդեց դաշնակից երկրների, հատկապես Անգլիայի պետական այրերի ու հայասեր գործիչների հետ ունեցած հանդիպումներից, որոնք հնարավորություն են ընձեռում ամբողջացնելու հիմնահարցի լուսաբանումը: «Հայերը,- գրում է ռուս պատմաբանը,- չնայած ռուսական հին վարչակազմի կողմից նրանց ազգային գիտակցությանը հասցված դաժան վիրավորանքներին, Կովկասի բոլոր ժողովուրդներից առավել հավատարիմ մնացին Ռուսաստանին: Նրանք ակտիվորեն մասնակցեցին Թուրքիայի դեմ ռուսական բոլոր պատերազմներին, որովհետև փոքրասիական թերակղզու արեւելյան կիսամասում բնակչության կեսից ավելին հայկական էր եւ ընդհանրապես քրիստոնյա»:¹ Միլյուկովը դժբախտաբար չի նշում, թե ինչ դաժան վիրավորանքների մասին է խոսքը, որ հայերի ազգային գիտակցությանը հասցրին ռուսական կայսրության բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց սադրիչ գործողություններով: Նկատի ունե՞ր արդյոք ռուս նշանավոր քաղսրագետը եւ պատմաբանը Լորանով-Ռոստովսկու քաղաքականությունը, թե՞ հայոց առաքելական եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքը, իսկ միգուցե փոխարքա Գուլիցինի թաթարներին (ադրբեջանցիներին) խաղաղ հայ բնակչության դեմ ուղղելու 1905-1906 թթ. սադրանքները, կամ դրան հաջորդած երկարատեւ դատավարությունը Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության դեմ, որը փաստորեն ուղղվեց մի ամբողջ ժողովրդի դեմ, թե՞ հայությանը անջատվողականության (սեպարատիզմի) մեջ մեղադրելու պետական քաղաքական աստիճանի բարձրացրած անհեթեթությունը: Կադետական կուսակցության համար անառարկելի մեծ հեղինակություն եւ ճանաչված դեկավար, խելացի ու կրթված անձնավորություն, նուրբ ու խորաբափանց,

¹ П.Н.Миллюков, Воспоминания. М., 1990, т. I, стр. 120.

իրատես եւ հմուտ քաղաքագետ, ռուսաց պատմագիտական մտքի համակարգում արդեն իր պատվավոր տեղը զբաղեցրած Միլյուկովը, վտարանդիության մեջ հավատարիմ մնալով իր դավանած քաղաքական քրեդոյին, քաջ գիտակցում էր, որ առարկայորեն ոչ հայանպաստ արտաքին քաղաքականությունը ի սկզբանե չի կարող լինել իրատես, առավել եւս բխել Ռուսաստանի ազգային-պետական ծավալապաշտական շահերից: Պատմական անվիճելի ճշմարտություն՝ Ռուսաստանի բոլոր հեռատես պետական ու նշանավոր քաղաքական գործիչները, որոնց համար գերակայող էին երկրի ազգային շահերը, որոնք ելակետային էին համարում պատմական իրատեսությունը եւ քաղաքական սթափ ու անաչառ մոտեցումները, որպես կանոն ունեցել են հայանպաստ դիրքորոշում, որը թե՛ օրինաչափություն է եւ թե՛ անհրաժեշտություն: Միլյուկովը, անշուշտ, նրանցից մեկն է, որի խոր համոզմամբ «հայերն ուրիշներից ավելի մոտ էին մեզ (ռուսներին, Ռուսաստանին -Մ.Մ.) նաեւ քաղաքական տեսանկյունից»:¹ Նրա կարծիքով արեւմտահայերը, ի տարբերություն Թուրքիայի եվրոպացի քրիստոնյաների, ապրում էին Եվրոպայի տեսադաշտից հեռու, որի պատճառով էլ նրանց դրության մասին համեմատաբար քիչ էր հայտնի Եվրոպայում: Մինչդեռ քառասուն տարվա ընթացքում թուրքերը եւ հատկապես քրդերը, որոնց միջավայրում ապրում էին հայերը, հետեւողականորեն ու անընդմեջ կոտորում էին նրանց կարծես իրականացնելով «Հայկական Հարցի լուծումը հայերին գլխովին ոչնչացնելու մեջ է»² ծրագիրը: Միլյուկովի արժեքավոր եւ ճշմարտացի վկայությամբ «անգլիական կառավարությունը Թուրքիային հովանավորելու իր քաղաքականության մեջ մատների արանքով էր նայում այդ ջարդերին եւ դրանով իսկ այն կարծես խրախուսում»:³ Իսկ «անգլիական ֆիլանտրոպները եւ հյուպատոսները, շարունակում է պատմաբանը, հայկական կոտորածները կատարվելուց հետո խնամքով հանրագումարի էին բերում դրանց թվական արդյունքները»:⁴

¹ П. Н. Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, стр. 120.

² Նույն տեղում., էջ 120-121:

³ Նույն տեղում., էջ 121:

⁴ Նույն տեղում., էջ 120:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա հայ ժողովրդի համար «...այս տառապալից ճանապարհի վերջին փուլում (1912) միջամտեց դիվանագիտական եղանակով»:¹ Միլյուկովը նկատի ուներ 1912 թ. ռուսաց դիվանագիտության նախաձեռնությամբ վերաբացված Հայկական Հարցը, հայկական բարենորոգումների շուրջ ծավալված պայքարը մեծ տերությունների միջև: Հատկանշական է, որ ինքը՝ Միլյուկովը, 1913 թ. եղել է Կ.Պոլսում եւ ներկա գտնվել ռուսաց դեսպանատան աշխատակիցների կողմից հայկական բարենորոգումների նախագծի մշակմանը, որով ծրագրվում էր մեկ ինքնավար նահանգի մեջ միավորել հայկական վեց վիլայեթները:

Միլյուկովի տեսադաշտից չի վրիպել Եգիպտահայ հայտնի հասարակական գործիչ, մեծահարուստ Նուբար Փաշայի ղեկավարած հատուկ պատվիրակության գործունեությունը՝ որին նշանակել էր «Արեւելյան Հայաստանում (Էջմիածնում) ապրող հայոց կաթողիկոսը»:² Պատմաքաղաքական առումով եւ պատմագիտական տեսանկյունից կարեւորվում է Միլյուկովի մեկնաբանությունը, թե ինչու ի վերջո ձախողվեց ռուսաց դիվանագիտության մշակած եւ արեւմտահայերի կացությունը քիչ թե շատ բարելավող նախագծի իրագործումը: Միլյուկովի համար պատճառը ավելի քան պարզ է, այն, ի դեպ, սպառնիչ է, անխոցելի, լիովին ընդունելի թե քաղաքական, թե պատմական եւ թե գիտական տեսանկյունից: «Տերությունները, հատկապես Գերմանիան, գրում է նա, միջամտեցին ու սկսվեց ռուսական նախագծի սովորական վերաձեւում՝ Թուրքիային ցանկալի ոգով, որը վերստին խոսեց վիլայեթների վերաբերյալ իր 1880 թ. օրենքը մտցնելու մասին»:³ Ընդհանրապես Միլյուկովի քաղաքական գործունեության մեջ առանցքային տեղ զբաղեցրեց քրիստոնյա, հատկապես բալկանյան ժողովուրդներին, ապա եւ արեւմտահայերին թուրքական յաթաղանից ազատագրելու հիմնահարցը: Այդ է, թերեւս, պատճառը, որ նա իր «Հիշողություններում» անդրադառնում է եվրոպական

¹ П.Н.Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, стр. 120.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

երկրներում ստեղծված հայասեր ընկերությունների եւ կոմիտեների գործունեությանը, որոնք, նրա կարծիքով, փորձում էին զանազան եղանակներով ու միջոցներով կամ փրկել արեւմտահայերին թուրքական լծից, կամ էլ գոնե բարենորոգումներով մի փոքր թեթեւացնել նրանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը: Միլյուկովը նշում է, որ իրեն հարկ եղավ մինչ 1913 թ. ավարտը հերթական անգամ լինել արտասահմանում եւս մի քրիստոնյա ժողովրդին թուրքական լծից ազատագրելու հիմնահարցի քննարկման կապակցությամբ: «Այս անգամ խոսքը գնում էր հայերի մասին»:¹ 1913 թ. նոյեմբերի 18-ին Փարիզում գումարվեց հայ ժողովրդի բարեկամների կոմիտեների խորհրդաժողով, այն պետք է ոչ միայն քննարկեր եւ մշակեր հայկական բարենորոգումների նախագիծ, այլեւ իր վրա սեւեռեր եվրոպական հասարակայնության ուշադրությունը, ստեղծեր հասարակական համապատասխան կարծիք, վերստին կիզակետում ունենալ հայ ժողովրդի սարսափելի ծանր դրությունը: «Ես այնտեղ ռուսական կոմիտեի ներկայացուցիչ էի՝ եւ դրա համար ունեի թե՛ սկզբունքային, եւ թե՛ անձնական պատճառներ»:² Իհարկե, Միլյուկովը իրավունք ունի՝ նա սկզբունքորեն իրեն պարտավորված էր զգում մասնակցել այդ խորհրդաժողովին, չէ որ, ինչպես արդեն նշվեց, հայերը առավել հավատարիմ մնացին Ռուսաստանին: Անձնական եւ ենթակայական առումով եւս նրա մասնակցությունը արդարացված էր ու հիմնավորված, քանզի հայերը քաղաքական տեսակետից նույնպես բոլորից մոտ էին կանգնած Ռուսաստանին, իսկ հայ մտավորականությունը, ըստ հեղինակի, մեծամասամբ կիսում էր կաղետների համոզմունքը, գաղափարները, եւ նրա ներկայացուցիչներ Աճեմյանը ու Բաբաջանյանը նույնիսկ մտնում էին Դոմայի ֆրակցիայի մեջ: Ինչ վերաբերում է Թիֆլիսի քաղաքագլուխ Ա.Խատիսյանին, ապա նա նույն ուղղությունը ներկայացնում էր Կովկասում:³ Խորհրդաժողովը գումարվեց այն ժամանակ, երբ ռուսաց դիվանագիտության կողմից մշակված Արեւմտյան Հայաստանի

¹ П.Н.Милаюков, Воспоминания, М., 1990, т. I, стр. 120:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

բարենորոգումների նախագծի քննարկումը գտնվում էր ամենաեռուն շրջանում, ուստի քաղաքական առումով պահը նպաստավոր էր, իսկ ժամկետի ընտրությունը՝ ճիշտ: Այս երկու կարենորոգւոյն քաղաքական իրադարձությունների ժամանակի մեջ համընկնելու հանգամանքը ավելի շատ օրինաչափ էր, քանզի նրա կազմակերպիչները նպատակադրվել էին մի կողմից ներգործել մեծ տերությունների ներկայացուցիչների վրա, իսկ մյուս կողմից ճնշում գործադրել թուրքական կառավարող շրջանների վրա, որպեսզի նրանք ընդունեն եւ իրագործեն ռուսաց նախագիծը: Միլյուկովը մեկ այլ առիթով եւս անդրադառնում է խորհրդածողովին, նշելով, որ Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների նախագծի քննարկմանը զուգահեռ «յոթ տերությունների ներկայացուցիչները նոյեմբերի 17-ին Փարիզում *Asie Francaise* կոմիտեին կից քննարկում էին Թուրքիայի վրա փոխառության մերժման միջոցով ճնշում գործադրելու մասին հարցը: Մեր խորհրդածողովը Պոլոսի նախագահությամբ պետք է կարգի բերեր այդ ամբողջ նյութը: Այդ հիմքի վրա հասունացավ վեց վիլայեթներից...«Մեծ Հայաստան» ստեղծելու մասին գաղափարը: Այդ գաղափարն էլ քարոզվում էր Եվրոպայի առաջադեմ շրջաններում»:¹ Այս առաջարկների մշակման ու ցանկությունների իրագործման համար անշուշտ ելակետային է ռուսաց դիվանագիտության կողմից եվրոպական տերությունների քննարկմանը ներկայացրած նախագիծը: Միլյուկով պատմաբանը սպառիչ ձեւով ներկայացնում է քաղաքական այն գործոնները, որոնց պատճառով Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների նախագիծը ի դերեւ ելավ: Նրա տեսակետը եւ գնահատականը վերոհիշյալ հիմնահարցերի մասին պատմագիտորեն անաչառ են, իսկ միջազգային-քաղաքական տեսանկյունից իրատես ու առարկայական: «Թվում էր, թե Թուրքիայի հետ սկսված պատերազմը հեշտացրեց դրա իրագործումը (արեւմտահայության բարենորոգումների նախագիծը -Մ.Մ.), բայց Թուրքիան կանխեց այն 1915 թ. սարսափելի ջարդերով: Վեց վիլայեթների հայ բնակչության զգալի մասը ոչնչացվեց բրդերի կողմից, մյուսներին՝ ծերերին, կանանց եւ երեխաներին թուրքերը որոշեցին արտաքսել Միջագետք: Այնտեղ հասան միայն խղճուկ

¹ П.Н.Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, стр. 121

մնացուկներ. մեծ մասը գոհվեց ճանապարհին՝ սովից եւ ուժասպառությունից, հիվանդություններից, հարավային կիզիչ շոգից ու խոնավությունից: Ամբողջ միլիոնանոց բնակչությունից փրկվեց միայն մի քանի հարյուր հազարը՝ Արեւելյան Հայաստանի սահմաններում»:¹ Այսպիսով, Միլյուկովը հայկական բարենորոգումների նախագծի ձախողումը հիմնականում պայմանավորում է առաջին աշխարհամարտի եւ հատկապես Հայոց Մեծ եղեռնի հետ, որի հետեւանքով գրեթե ամբողջովին ամայացվեց Արեւմտյան Հայաստանը: Սակայն, ըստ ռուս պատմաբանի, առկա էին այլ, ոչ պակաս կարեւոր հիմնապատճառներ: «Մեծ տերությունների հավակնությունները փոքրասիական տարածքների հատվածում խաչաձեւվեց «Մեծ Հայաստանի» բուն գաղափարի հետ»:² Պատմական ճշմարտություն է, որ մեծ տերությունների միջեւ եղած սուր հակամարտություններն այս անգամ էլ տապալեցին հայության ակնկալիքները: Եւ, վերջապես, «Մեծ պատերազմի արդյունքը, ամբողջացնում է հիմնախնդիրը Միլյուկովը, խաչ դրեց Հայկական Հարցի վրա»:³ Նրա հիմնավորած այս հիմնապատճառը չափազանց տարողունակ է ժամանակի ու տարածության մեջ, քանզի պայմանավորված է միջազգային-քաղաքական բարդ, հակասական ու իրարամերժ իրադարձությունների հետ: Կադետական կուսակցության նշանավոր ղեկավարը ամենայն հավանականությամբ նկատի ուներ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում, որից հետո բոլշեւիկյան կառավարության դիվանագիտական-քաղաքական գործողությունները, ի վերջո, փակեցին Հայկական Հարցի լուծման բոլոր հնարավոր ուղիները: Միլյուկովը հավանաբար չէր բացառում դաշնակիցների դիրքորոշման կտրուկ շրջադարձը հայկական հիմնահարցում:

Միլյուկովը Եվրոպայում գտնվելու ժամանակ մեծ տերությունների բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպման ու գրույցների ընթացքում նույնպես քննարկել էր Հայկական Հարցը: Հեղինակը դրանցից հիշարժան է համարում անգլիացիներ Բրայսի եւ Նոել Բաքստոնի կողմից իր պատվին

¹ П.Н.Мялюков, Воспоминания, М., 1990, т. I, стр. 121:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 206:

1916 թ. Լոնդոնում կազմակերպած ճաշկերույթը, որտեղ «գլխավոր թեման Հայկական Հարցն էր»:¹ Միլյուկովը նրանց ներկայացնում է որպես «Հայաստանի պաշտպաններ», որոնք իսկապես բրիտանական կայսրության մերձավոր արեւելյան քաղաքականության շրջանակներում որոշակի հետաքրքրություն էին ցուցաբերում Հայկական Հարցի նկատմամբ եւ ընդհանուր առմամբ հանդես գալիս հայանպաստ դիրքերից: «Ես ինքս նույնպես պատկանելով դրանց թվին (հայասերների -Մ.Մ.), սակայն,- նշում է Միլյուկովը,- Հայաստանի անկախությունը տերությունների հովանավորության ներքո դնելու նրանց ձգտումներին, հակադրում էի Մեծ Հայաստանի ինքնավարությունը Ռուսաստանի սուվերենության ներքո»:² Անշուշտ հայ ժողովրդի շահերի տեսանկյունից երկու տարբերակն էլ թերեւս առաջադիմական էին ու ընդունելի, քանզի դրանց իրագործմամբ նա մի կողմից կթոթափեր թուրքական դարավոր լուծը, իսկ մյուս կողմից սահմանափակ շրջանակներում կվերականգներ իր կիսաանկախ պետականությունը: Իհարկե, ռուսաց նախագիծը ավելի իրականանալի էր, քանզի Ռուսաստանը, ինչպես արդեն բազում անգամ նշվել է, բոլորից շատ էր շահագրգռված Հայկական Հարցի լուծման մեջ: Անհրաժեշտ է այս առնչությամբ հատուկ ընդգծել պատմաքաղաքական այն ակնառու եւ անժխտելի փաստը, որ հայ-ռուսական դարավոր ու ելեւէջներով անցած հարաբերությունները բռնեցին ժամանակի փորձությունը: Մինչդեռ եվրոպական մեծ տերությունների հովանավորությունը, թերեւս քիչ հավանական էր նրանց միջեւ եղած սուր ներհակությունների ու Թուրքիայի նկատմամբ քաղաքական տարբեր դիրքորոշում ունենալու, նրան սիրաշահելու պատճառով: Այդ են վկայում Բեռլինի վեհաժողովում ընդունված (1878 թ.) 61-րդ հոդվածը, 90-ական թթ. բարենորոգումների նախագիծը, 1912-1914 թթ. ընթացքում մշակված համաձայնագիրը եւ նրանց կողմից ձեռնարկված համատեղ այլ քայլերը: Իսկ Թուրքիան Բեռլինի վեհաժողովից հետո, երբ Հայկական Հարցը դուրս եկավ միջազգային ասպարեզ ու դարձավ մեծ տերությունների շահարկման առարկա, հմտորեն օգտագործում էր այդ

¹ И.Н.Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, стр. 206:

² Նույն տեղում, էջ 207:

հակասությունները եւ, բոլոր միջազգային որոշումները դարձնելով թղթի պարզունակ մի կտոր, հրաժարվում էր դիվանագիտական նուրբ հնարքներով դրանց լուծումից:

Բրայսի եւ Բաքստոնի հետ Միլյուկովի հանդիպման ժամանակ քննարկվեց նաեւ տարածքային հիմնախնդիրը: «Հայաստանի ապագա տարածքների մասին հարցում ես հերքեցի, թե մենք ձգտում ենք Մոսկովին ու սահմանափակում մեր ձգտումները՝ Դիարբեքիով...անջատելով Փոքր Հայաստանը (Կիլիկիան) եւ Ալեքսանդրեթը: Նրանք գիտեին եւ ինձ ցույց տվեցին Հայաստանի վերաբերյալ Դումայում իմ ճառի թարգմանությունը»:¹ Լոնդոնում գտնվելու օրերին Միլյուկովը հանդիպեց նաեւ անգլիացի նշանավոր պետական գործիչ, արտգործնախարար Էդուարդ Գրեյի հետ: Պատերազմի, նեղուցների, առանձին (սեպարատ) հաշտություն կնքելու վերաբերյալ Թուրքիայի առաջարկի եւ այլ հիմնախնդիրների քննարկման ընթացքում «ես,- նշում է Միլյուկովը,- բարձրացրի նրբաբնույթ մեկ այլ՝ Հայկական Հարցը: Գրեյը կասեցրեց իմ հարցը,- շարունակում է նա,- հիշեցնելով Պետական Դումայում իմ ելույթը, որը այստեղ (Անգլիայում -Մ.Մ.) «առաջացրեց աղմուկ»: Նա խոստովանեց, որ Սազոնովը (Ռուսաստանի արտգործնախարարը -Մ.Մ.) «իրեն գրել է անեքսիայի վերաբերյալ իր ցանկության մասին եւ նորից կրկնեց, դա Ռուսաստանի գործն է, մենք պետք է համակերպվենք ձեր ցանկությունների հետ»: Բայց Միլյուկովը կատարում է ճիշտ եւ կարելիոր եզրակացություն,- նրա համար այդ թեման ցանկալի չէր»:² Հայկական Հարցին որոշակի տեղ հատկացնելու հանգամանքը գերազանցապես պայմանավորված էր Ռուսաստանի կենսագործած արտաքին քաղաքական հիմնախնդիրներով: Հայկական Հարցի էությունը, նրա նշանակությունը եվրոպական դիվանագիտության եւ ռուս-թուրքական առնչությունների շրջանակների համար Միլյուկովը իր դասախոսություններից մեկում արտահայտվել է հետեւյալ խորիմաստ բառերով. «Եվրոպայի առջեւ է՝ կամ Թուրքիայի լիակատար բաժանում, կամ էլ ազդեցության ոլորտների բաժանում: Հայերը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ ամուր

¹ П.Н.Миллюков, Воспоминания. М. 1990, стр. 206-207.

² Նույն տեղում:

նստել էին ուղեխաչքում: Հետեւապես Հայկական Հարցը ունի կենտրոնական նշանակություն»:¹

Պ.Ն.Միլյուկովի գաղափարակից IV Պետական Դումայի հայազգի պատգամավոր Մ.Բաբաջանյանի (Պապաջանով) ելույթի իմաստը Դումայի 1916 թ. մարտի 11-ի նիստում լիովին համընկավ իր ճանաչված ու հեղինակավոր կուսակցի ճառի բովանդակությանը: Եւ դա միանգամայն օրինաչափ է, քանզի նրանք Դումայում ներկայացնում էին կադետական կուսակցությանը եւ, բնականաբար, հանդես էին գալիս միեւնույն քաղաքական ծրագրով: Սակայն Բաբաջանյան հայորդիի պատգամավորին, թերեւս, բոլորից շատ էր հուզում ու մտահոգում արեւմտահայության դժնդակ ողբերգական ճակատագիրը: Չնայած դրան, նրա ելույթը ոչ այնքան զգացմունքային էր, որքան իրատես, որովհետեւ ոչ միայն դատապարտվում էր երիտթուրքերի ոճրագործությունները, այլեւ արվում Ռուսաստանի ազգային-պետական շահերից բխող, կարելի էր սկզբունքային նշանակություն ունեցող առաջարկներ: Ելույթի սկզբնամասում հռետորը հիշեցրեց, որ Ռուսաստանի հանդեպ բարեկամաբար տրամադրված երկրների պառլամենտները մի քանի անգամ անդրադարձել են թուրքիայում ապրող եւ Արեւմտյան Հայաստանի հայության դրությանը նվիրված հիմնախնդրին: Ռուսաստանի Պետական Դուման,- նշեց Բաբաջանյանը,- երկար ժամանակ նիստեր չէր գումարել, ուստի եւ նա բնականաբար ի վիճակի չէր քննարկել Արեւմտյան Հայաստանում կատարված իրադարձությունները, ոչ էլ հասարակության ուշադրությունը բեւեռել հայոց ողբերգության վրա: Մինչդեռ Հայոց Մեծ Եղեռնը պատգամավորի կարծիքով բոլորից շատ վնասում էր նաեւ Ռուսաստանին, որովհետեւ հայության մոտ կեսը ապրում էր ռուսական հպատակության ներքո, եւ, բնականաբար, նա չէր կարող անտարբեր լինել այն ամենին, ինչ կատարվում էր իր եղբայրների նկատմամբ հարեւան երկրում: Իսկապես, մեծ թուրանական ծրագրերը, որոնց գոհ դարձան արեւմտահայերը, ուղղված էին նաեւ Ռուսաստանի դեմ, թեկուզ նրանից հսկայական տարածքներ զավթելու մտահղացման առումով: «Այն, ինչ կատարվեց Հայաստանում (Արեւմտյան -Մ.Մ.)

¹ В.Гурко-Кряжин, История революционной Турции, М., стр. 77

աննկարագրելի է,- ասաց Բաբաջանյանը,- անհասանելի նույնիսկ երեւակայությանը: Չնայած աղետների առկայությանը Բելգիայում, Սերբիայում, Լեհաստանում, այնուամենայնիվ մարդկային ողբերգության համանիշ դարձավ Արեւմտյան Հայաստանը: Այս պատերազմում աշխարհի եւ ոչ մի ազգ չկրեց այնքան զոհեր, որքան հայերը»:¹ Ավելին, նրա խոր համոզմամբ հայ ժողովուրդը, որը դարերի ընթացքում ենթարկվել էր անվերջ հալածանքների ու աղետների, այնքան չէր տուժել եւ արհավիրքներ վերապրել, որքան 1915-1916 թթ.: «Թուրքական արկածախնդիրների հրեշավոր շվայտության զոհեր դարձան հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ, գլխավորապես կանայք ու երեխաներ»:² Անշուշտ սխալվում էր 'Ռումայի ներկայացուցիչը, որովհետեւ զոհերի թիվը դժբախտաբար կազմեց առնվազն 1.5 միլիոն: Բաբաջանյանն իր ելույթում վերլուծեց պատերազմի նախօրյակին Թուրքիայում եւ Արեւմտյան Հայաստանում ստեղծված քաղաքական իրադրությունը, երիտթուրքերի ծրագրերը արեւմտահայության նկատմամբ, նշեց այն առիթ-պատրվակները, որոնք իբր նրանց մղեցին իրականացնելու Հայոց Ցեղասպանություն: Նա եւս համոզված էր, որ եղեռնը նախապես ծրագրված էր երիտթուրքերի պարագլուխների կողմից եւ այդ առնչությամբ դիմագերծում է նրանց փարիսեցիությունը: «Տակավին Գերմանիայի հետ պատերազմի (Ռուսաստանի -Մ.Մ.) սկզբին, երբ Թուրքիան դեռեւս ներքաշված չէր պատերազմի մեջ, արեւմտահայերին արվում էին որոշակի առաջարկություններ ինչպես «Միություն եւ Առաջադիմություն» կոմիտեների անդամների, այնպես էլ պաշտոնական անձանց կողմից»: Արեւմտահայերին խոստանում էին ոչ միայն կյանքի անձեռնմխելիություն, այլեւ ինքնավար կառուցվածք Արեւմտյան Հայաստանի, նույնիսկ Կովկասի սահմաններում, որը Թուրքիային խոստացել էր Գերմանիան, եթե նրանք անցնեն Թուրքիայի կողմը եւ դավաճանեն Ռուսաստանին: «Այդ առաջարկները,- ընդգծում է հոետորը,- հայերի կողմից բնականաբար մերժվեցին եւ դրանից սկսվեցին բոլոր աղետները»:³

¹ "Армянский Вестник", 1916; №8, стр. 7.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

Իհարկէ այս առաջարկներն ու խոստումները պատրանք էին եւ խաբկանք արեւմտահայերին ոչ միայն ապակողմնորոշելու, սիրաշահելու, այլեւ նրա զգոնությունը թմրեցնելու համար: Մեծ Թուրանական պետություն ստեղծելու ծրագրերը քաղաքական ոչ մի պարագայում չէին կարող զուգակցվել Արեւմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհելու հետ: Ավելին, այն նախատեսում էր հայության իսպառ բնաջնջում, Արեւմտյան Հայաստանի ամայացում, նրա բնակիչներին իր բնօրրանից բռնավտարում:

Բաբաջանյանի միանգամայն ընդունելի գնահատմամբ երիտթուրքերի քաղաքականությունն ըստ էության կարմիր սուլթան Արդուլ Համիդի քաղաքականության շարունակությունը եղավ, որովհետեւ նրանք, որդեգրելով նրա հայակույ գործողությունները, Հայկական Հարցը «լուծում» էին հայերին ի սպառ վերացնելու միջոցով: Եւ գործի դրվեցին թուրքական հայտնի պետական հրեշավոր մեքենայի արյունոտ երախի բոլոր հայտնի լծակները՝ սկսած հայերին Ռուսաստանի օգտին լրտեսության մեջ մեղադրանքից, ապստամբություններ նախապատրաստելու մասին սին ադմուկից, հայ երիտասարդությանը վերացնելու նպատակով բանակ գորակոչելու սադրանքից, մինչեւ թուրքական պառլամենտի հայ պատգամավորների հոշոտումը, հայ բնակչության զանգվածային բռնի տեղահանումը եւ ճանապարհին գազանաբար ոչնչացումը: «Պաշտոնապէս վկայագրված է,- մատնանշում է նա,- որ մոտ 1,800 հայ զինվոր սպանվեց Դիարբեքիի մոտ իր թուրք զինակիցների կողմից: Մի քանի գյուղերում ոչնչացրին ողջ տղամարդ բնակչությանը, մնացածներում չէին խնայում նույնիսկ ծծկեր երեխաների ու ծերերի: 1915 թ. մայիսի 20-ին երիտթուրքական կառավարությունը. դեկրետ հրապարակեց հայ բնակչությանն ամբողջովին Միջագետք գաղթեցնելու մասին, հուսալով, որ նրա մի մասը կգոհվի ճանապարհին, իսկ մյուսը՝ հազիվ թե կենդանի մնա Միջագետքի շոգ ու ավազոտ անապատում: Սակայն դրանով չսահմանափակվեցին: Ստեղծվեցին հատուկ հրոսակախմբեր, որոնք հետապնդում էին գաղթականներին եւ, ճանապարհին հասնելով նրանց, կոդապտում էին ու սպանում»:¹ Այս ամենը Բաբաջանյանը հա-

¹ "Армянский Вестник", 1916; №8, стр. 7.

վաստում է անվիճելի փաստերով. հատկապես օտարերկրյա ճանապարհորդների եւ դիվանագիտական ներկայացուցիչների վկայություններով: «Նորվեգուհի Ֆլորա Վեդելը 1914 թ. հոկտեմբերից մինչեւ 1915 թ. ապրիլը՝ ապրելով Արեւմտյան Հայաստանում ու աշխատելով այսպես կոչված “Deutsche Militar Mission”-ում հավաստում էր, օրինակ, որ իրեն ուղեկից ուտիկանը պարծենում էր, թե իր աչքերի առջեւ ոչնչացվեցին ուղեկցելու համար իրեն հանձնարարված հարյուրավոր հայեր: Խարբերդի ամերիկյան հյուպատոսը վկայում է, որ այդ քաղաքից մի քանի վերստ հեռավորության վրա հսկայական թվով դժբախտ աքսորաբնակներ՝ 3,000 մարդ, գլխովին կոտորվեցին»:¹ Ռուսական Գիւմայի պատգամավորը լիովին ժխտում է այն հերյուրանքները, թե իբր այդ սարսափելի աղետների մեջ մեղավոր են հենց իրենք՝ հայերը, որոնք, հրահրվելով ռուսական ու անգլիական դիվանագիտության կողմից, դիմում էին ապստամբության: Այս կեղծ ու անհիմն վկայակոչումները կաղեւտական կուսակցության գործիչը հերքում է մի քանի հիմնարար փաստերով: Նախ, թուրքական իշխանությունները մինչեւ հայ, հատկապես գյուղական բնակչության ֆիզիկական ոչնչացումը զինաթափում էին նրանց եւ դրանով իսկ կանխում դիմադրության համար որեւէ հնարավորություն: Երկրորդ, այնժամ, երբ գյուղերում զգացին, որ այդ զինաթափումը սկիզբ է աղետների եւ կոտորածների համար, դրանից հետո միայն հրաժարվեցին զենքը հանձնելուց եւ դիմեցին ինքնապաշտպանության: Սովորաբար այդպիսի դեպքերի համար ասում են, թե մեկնաբանություններն ավելորդ են: Չժխտելով այս իրատես ու թեւավոր արտահայտությունը, այսուհանդերձ կավելացնենք, որ յուրաքանչյուր ժողովրդի, ազգի, անհատի սրբազան պարտքն է ու իրավունքը պաշտպանվելու արնախում ոճրագործների ոտնձգություններից: Եւ միանգամայն օրինաչափ է ու բանական, որ մարդկության պատմությունը ճնշված ժողովուրդների այդպիսի քայլերն ու գործողությունները՝ ստանա այն ապստամբություն, ինքնապաշտպանություն, ազատամարտ, թե մեկ այլ անուն ոչ միայն լիովին արդարացնում է բոլոր տեսանկյունից, այլեւ դա դիտում որպես սխրանք, հերոսություն: Ահա ինչու այս ամենին

¹ “Армянский Вестник”, 1916; №8, стр. 7.

նվիրված են բազում ծանրակշիռ պատմագիտական անաչառ ուսումնասիրություններ, ձոնված են մեծարժեք գեղարվեստական երկեր եւ դրանով իսկ ոսկե տառերով հավերժացված մարդկային հիշողության մեջ:

Պետական Դումայի նիստում Բաբաջանյանը բացահայտեց նաեւ Գերմանիայի մեղսակցությունը Հայոց Ցեղասպանության մեջ, ուստի նրա կարծիքով զարմանալի չէ, որ հայերի «այդ ինքնապաշտպանությունը գերմանացիներն անվանում են հենց ապստամբություն սադրված մել (ռուսական -Մ.Մ.) դիվանագիտության կողմից»:¹ Նա եւս համամիտ է այն կարծիքին, որի համաձայն ոչ Գերմանիայի կառավարող շրջանները, ոչ էլ Կ.Պոլսի գերմանական դեսպանատունը ոչինչ չարեցին այդ աննախադեպ դժոխքից հայերին փրկելու համար: Մինչդեռ Դումայի պատգամավորը նույնպես չի կասկածում, որ Գերմանիան ուներ այդպիսի քաղաքական լծակներ, դիվանագիտական միջոցներ եւ հնարավորություններ, քանզի «վաղուց արդեն հայտնի է, որ Կ.Պոլսի նախարարներն ունեն գերմանական դեսպաններից ավելի քիչ ազդեցություն: Եւ, այնուամենայնիվ, պրն Վանհենհեյմը (Գերմանիայի դեսպանը Թուրքիայում -Մ.Մ.) ոչինչ չարեց, որպեսզի կանգնեցնի այդ զարհուրելի եղեռնագործությունը: Գերմանական մամուլը պաշտպանում էր Կ.Պոլսի իր դիվանագետի տեսակետը, հայտարարելով, թե դրանք ներքին գործեր են, եւ նա միջամտել չի կարող»:² Հատկանշական է, որ Հայոց Ցեղասպանության հարցում Ռուսաստանի դեմ պատերազմող Գերմանիայի նման դիրքորոշման համար Բաբաջանյանի ելույթի ժամանակ Դումայում՝ կենտրոնից եւ ձախից եղան «ինչպիսի խայտառակություն» բացականչություններ: «Գերմանիայի վերաբերմունքը (Թուրքահայաստանում -Մ.Մ.) կատարված չարագործություններին,- ամփոփում է նա,- հավերժ խայտուցով կընկնի իր մշակույթով պարզեցող Գերմանիայի վրա»:³ (Լսվեցին «ճիշտ է» բացականչություններ):

Պատմական արդարությունը պահանջում է ասել, որ կայգերական-պաշտոնական Գերմանիային զուգահեռ գոյու-

¹ "Армянский Вестник" 1916; №8, стр.8.

² Նույն տեղում.

³ Նույն տեղում:

թյուն ուներ Յոհաննես Լեփսիուսի, Արմին Վեգների, Յոզեֆ Մարկվարտի, Կարլ Լիբկնեխտի, Ռոզա Լյուքսեմբուրգի, Էդուարդ Բեռնշտայնի Գերմանիան, որոնք ոչ միայն սատար կանգնեցին արեւմտահայերին, ոչ միայն դատապարտեցին թուրքական ոճրագործությունները, այլեւ մեղադրեցին պաշտոնական շրջաններին այդ հանցագործությունների նկատմամբ անտարբերության եւ, ըստ էության, մեղսակցության համար:

Բաբաջանյանի ելույթում միաժամանակ նշվեց Արեւմտյան Հայաստանի ազատագրված տարածքներից ռուսական բանակների երկու անսպասելի նահանջների մասին, որոնք նոր պատուհաս բերեցին արդեն աննկարագրելի արհավիրքներ վերապրած արեւմտահայերին. որի գոհ դարձան շուրջ 40,000 հայեր:¹ «Բաղաքական հաշվարկների առողջ բանականության պահանջներին հակառակ, բնակչությանը նախապես չէին տեղեկացրել. որ մեր գորքերը պետք է նահանջեն... մեր նահանջի ճանապարհին իշխանությունները որեւէ միջոցներ ձեռք չառան, որպեսզի փախստականների անցումը կատարվեր նվազագույն կորուստներով»:² Միանգամայն անաչառ եւ համարձակ քննադատություն կովկասյան բանակի հրամանատարության գործողությունների դեմ: «Ամեն անգամ,- իր ելույթի վերջում ասաց նա,- երբ Թուրքիայում նկատվում է ճգնաժամ, դրանից բոլորից շատ տուժում էին հայերը եւ որքան թույլ էր Թուրքիան, այնքան ավելի ուժեղ էին նրանց հասցված հարվածները»:³ «Բայց հայերը չհուսահատվեցին եւ, չնայած կրած զոհերին ու տառապանքներին, տոգորված էին եռանդով ու ուժով շարունակելու համառ պայքարը: Հայերը ռուսական գորքերի հետ ձեռք-ձեռքի տված մարտնչում էին 1878 թ. եւ, չնայած դրան հաջորդած ծանր պատժին, նրանք երբեք չկորցրին Ռուսաստանի օգնությամբ վերածնության հույսերը: Հայերը հավատում են, որ արդեն հեռու չէ այն ժամանակը, երբ կիրագործվեն նրանց գերագույն նպատակները, երբ կդադարի գոյության համար տագնապով լի կյանքը, երբ հայրենի հողում

¹ "Армянский Вестник" 1916; №8, стр.8.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

կրնդոստանան հին կոլտուրական հայ ժողովրդի նիրհող ուժերը»:¹ Այսպիսի լավատեսական ձայներանգով է ավարտում իր բոցաշունչ ելույթը ռուսական Դումայի հայազգի պատգամավորը:

Պ.Միլյուկովի եւ Մ.Բաբաջանյանի ելույթները Դումայում ժամանակագրական առումով համընկան արտգործնախարար Ս.Դ.Սազոնովի հայկական բարենորոգումների եռանդուն նախաձեռնողներից մեկի հրաժարականի հետ (1916 թ), որը տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց եւ դարձավ ռուս ու հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների քննարկման լայն առարկա: Այս է թերեւս պատճառը, որ նրան ժամանակակից հայ հասարակայնությունը դասեց աչքի ընկնող հայասեր գործիչների թվին, ուստի եւ վերջինիս անսպասելի հեռացումը քաղաքական ասպարեզից ու դիվանագիտական ակտիվ գործունեությունից որպես արտաքին քաղաքական գերատեսչության դեկավար, ընդունվեց մի կողմից ափսոսանքով, մյուս կողմից մտավախությամբ ու տարակուսանքով: Հայ հասարակայնության նման գնահատականը եւ հատկապես մոտեցումը, իհարկե, միանգամայն օրինաչափ էր եւ պայմանավորված էր ռազմաքաղաքական ու դիվանագիտական իրատես գործոններով: Նախ, հայ հասարակայնությունը Սազոնովին դասում էր խելամիտ դիվանագետների շարքը, որը գլխավորելով արտաքին գործերի նախարարությունը, կարողանում էր Ռուսաստանի մերձավոր արեւելյան քաղաքականության կենսագործումը հմտորեն եւ ճկունորեն զուգակցել արեւմտահայերի կացության քիչ թե շատ բարելավման, Օսմանյան կայսրության մեջ նրանց իրավունքների պաշտպանության հետ: Այդպիսի քաղաքականության համալսելակետ էր նրա այն համոզմունքը, թե արեւմտահայերի շահերի պաշտպանությունը սկզբունքորեն եւ առարկայորեն նպատուում էր Ռուսաստանի քաղաքական խնդիրների կենսագործմանը, ստեղծում ամուր ու անհրաժեշտ հեկարան ավելի լայնածավալ հիմնահարգեր առաջադրելու եւ հաջողությամբ լուծելու համար: Երկրորդ, հենց Սազոնովի անմիջական նախաձեռնությամբ 1912 թ. ռուսական դիվանագիտությունը վերաբացեց Հայկական

¹ "Армянский Вестник" 1916, №8, стр.9.

Հարցը՝ Արեւմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար: Նրա հետեւողական քաղաքականության շնորհիվ հնարավոր դարձավ ստանալ Անգլիայի ու Ֆրանսիայի աջակցությունը եւ այդ հիմնահարցում վերջին հաշվով հաղթահարել թուրք-գերմանական դիմադրությունը: Ահա ինչու հայ հասարակությունը նրա անվան հետ է մասամբ կապում 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, որով Թուրքիան պարտավորվեց Ռուսաստանի առաջ բարենորոգումներ անցկացնել Արեւմտյան Հայաստանում:

Երրորդ, Սազոնովի նախաձեռնությամբ դաշնակիցները՝ Ռուսաստանը, Անգլիան. Ֆրանսիան 1915 թ. մայիսին հանդես եկան համատեղ պաշտոնական, թերեւս, պատմական նշանակության հայտարարությամբ, որտեղ առաջին անգամ պաշտոնապես դատապարտվեցին երիտթուրքական ոճրագործությունները հայ Ժողովրդի նկատմամբ՝ Հայոց Մեծ Ցեղասպանությունը, նրանց պարագլուխներին արվեց ահեղ նախազգուշացում, որ Թուրքիայի կառավարող շրջանների պատասխանատվության կկանչվեն իրենց կատարած գազանությունների համար: Այդպիսի բովանդակություն ունեւ "Армянский Вестник"-ում տպագրված «Ս.Դ.Սազոնովի հրաժարականը եւ Հայկական Հարցը» խորագրով հոդվածը:¹

Հայ հասարակայնությունը միաժամանակ ուներ մտավախության եւ տարակուսելու իրավունք, այն պատճառով, որ թերեւս պարզ չէր, թե կայսերական հրամանով ո՞վ է փոխարինելու Սազոնովին այդ բարձր պաշտոնում եւ գլխավորելու արտաքին գործերի գլխավոր գերատեսչությունը: Ժառանգելու եւ շարունակելու՝ է արդյոք եւս իր նախորդի կենսագործած քաղաքականությունը, թե՞ կվերանայվի Ռուսաստանի քաղաքական դիրքորոշումը արեւմտահայության նկատմամբ:

Հայ հասարակայնությունը նկատի ունենալով այս ամենը եւ ելնելով հատկապես Միլուկովի Դիմալույմ հայտնի ելույթի ոգուց ու բովանդակությունից հույս էր հայտնում, թերեւս պահանջում դաշնակիցներից Հայոց Մեծ Եղեռնի համար ինչ-որ չափով վարձատրույթ լինել, փոխհատուցել հայ Ժողովրդին,

¹ "Армянский вестник", 1916; №26.

քանզի երիտթուրքական հանցագործներն իրենց ոճիրներն արդարացնելու նպատակով որպես կանոն օգտագործում էին հայ ժողովրդի կողմից Անգլիային ու Ֆրանսիային աջակցելու հանգամանքը, հատկապես արեւմտահայերի Ռուսաստանին հավատարիմ լինելու պատրվակը: Անշուշտ պատմական ճշմարտություն է, որ արեւմտահայերը որոշակի ակնկալիք ունեին Ռուսաստանից, իսկ պատերազմի տարիներին մաեւ դաշնակիցներից, եւ այս հանգամանքն, իհարկե, որոշ չափով նպաստեց երիտթուրքերի կատարած չարագործություններին: Սակայն վաղուց ապացուցված պատմական անժխտելի փաստ է, որ Մեծ Եղեռն ուներ անհամեմատ ավելի խոր արմատներ, միջազգային դիվանագիտական պատճառներ, որ Հայոց Ցեղասպանությամբ նրանք հետապնդում էին հեռու գնացող ազգայնամոլական ու կայսերապաշտական նպատակներ:

Հայոց հարցի, նրա նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշման, Մեծ Եղեռնի պատմության հետազոտողների մեջ իր կարեւորությամբ ու նշանակությամբ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ռուս նշանավոր դիվանագետ, իրավագետ, պատմաբան Անդրե Մանդելշտամի աշխատությունները: Նրա բեղուն գրչին են պատկանում Մոսկվայում 1915 թ. ռուսերեն լույս տեսած, ապա անմիջապես հայերեն թարգմանված եւ Էջմիածնում 1916 թ. հրատարակված "Младотурецкая Аержава" գիրքը, 1917 թ. ֆրանսերեն գրված «Օսմանյան կայսրության ճակատագիրը» ծավալուն աշխատությունը, որի առաջին մասը «Երիտասարդ թուրքերը պատերազմից առաջ» խորագրով թարգմանվեց հայերեն 1919 թ. Կ.Պոլսում: Անդրե Մանդելշտամը եղել է Կ.Պոլսում ռուսաց դեսպանատան գլխավոր թարգման եւ շուրջ 16 տարի կատարելով դիվանագիտական աշխատանք, հանգամանքների բերումով զբաղվել է Հայկական Հարցով, իսկ առաջին աշխարհամարտի տարիներին ակտիվորեն պաշտպանել է արեւմտահայերի շահերը, իրավունքները, դատապարտել երիտթուրքերի գազանություններն ու ոճրագործությունները, գործնական մասնակցություն ունեցել հոգուտ հայ գաղթականների եւ որպես միջազգային կազմակերպությունների հեղինակավոր անդամ բազմիցս հանդես եկել հայանպաստ դիրքերից ստեղծելով համապատասխան կարծիք Հայկական Հարցի շուրջ: Անդրե

Մանդելշտամը դատապարտում է Հայոց Ցեղասպանությունը, պաշտպանում արեւմտահայերին. որովհետեւ երիտթուրքերը խախտեցին միջազգային իրավունքը, ամենաբիրտ ձեռով ոտնահարեցին այն եւ գազանաբար հոշոտեցին հայ բնակչությանը, զավթեցին նրանց գույքը եւ տիրացան հարստությանը: Միջազգային իրավունքի նշանավոր պրոֆեսորը եւ մեծ հումանիստը մերժում է բոլոր այն տեսությունները, որոնք ջատագովում են ուժի, բռնության հաղթանակը իրավունքի նկատմամբ, քանզի այդ պարագայում ոտնատակ են արվում ազգերի, անհատների, մարդկանց, ժողովուրդների իրավունքները, որի պերճախոս վկայությունը եղավ Հայոց Մեծ Եղեռնը Օսմանյան կայսրությունում: «Մենք կը հաւատանք,- գրում է ռուս դիվանագետը,- որ պետութեան իրաւունքէն վեր կը բարձրանայ միջազգային իրաւունքը եւ այս երկու իրաւունքներէն վեր մարդկային իրաւունքը»:՝¹ Հեղինակը դատապարտում է օսմանյան ողջ արյունոտ կայսրությունը, որովհետեւ այնտեղ իրավունքի գաղափարին հայտարարված է հավիտենական, մշտական պատերազմ: Նրա բոլոր աշխատությունները գրված են գիտաքաղաքական բարձր մակարդակով, պատմագիտական պատշաճ պարկեշտությամբ, հիմնախնդիրների հանդեպ ցուցաբերած անաչառությամբ ու իրատեսությամբ, մեծ տերությունների պաշտոնական փաստավերագրերի խորագիտակ իմացությամբ եւ ուսումնասիրությամբ: Նրկար տարիներ աշխատելով Կ.Պոլսի ռուսաց դեսպանատանը որպէս գլխավոր թարգման, նա ակտիվորեն մասնակցել է ու, հետեւաբար, իր ներդրումն ունեցել Հայկական հացի վերաբացման. Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների դիվանագիտական քննարկումներին եւ, իհարկե, 1914 թ. հունվարյան համաձայնագրի հողվածների մշակմանը: Ուստի արեւմտահայերի նկատմամբ երիտթուրքերի քաղաքականության մասին նրա գնահատականներն ունեն պատմաքաղաքական հսկայական արժեք: 'Իվանագիտական աշխատանքի պաշտոնական բերումով Ա.Մանդելշտամը անձամբ ծանոթ է եղել երիտթուրքերի պարագլուխներին, տեղյակ էր նրանց քաղաքական փաստաթղթարին ոչ միայն

¹ Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը եւ Հայկական Հարցը, Կ.Պոլիս, 1919, մաս առաջին, էջ 12:

վերջիններիս պաշտոնական ծրագրերից: Մանդելշտամը համոզված էր, որ երիտթուրքերի արյունոտ քաղաքական քրեդոն հայ ժողովրդի նկատմամբ ոչ միայն ոչնչով չէր զիջում Աբդուլ Համիդի կանխագծումներին, այլև իր հրեշազությունները ու ազգայնամոլությամբ անգամ զգալիորեն գերազանցում այն, որն ապացուցված է պատմական անմիատեղի փաստերով: Նրա աշխատություններն էապես լրացնում են այդ դժվար վիճարկվող պատմափաստը:

Ա.Մանդելշտամը տալիս է 1908-1909 թթ. երիտթուրքական հեղաշրջման դասական գնահատականը: «Ինչ-որ այդ ժողովուրդը եղած փոփոխութեան մէջ շահեցաւ,- գրում է նա,- փոխանակ մեկի բազմաթիւ Ապտիւլ Համիտներ ունենալը եղաւ: Նրէկուան յեղափոխականներու բախտախնդիրներ դարձան»:¹ Ա.Մանդելշտամը պսակագերծելով երիտթուրքերի քաղաքականությունը, միաժամանակ փաստարկումներով ապացուցում է Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի պետական-քաղաքական բարձրաստիճան գործիչների, դիվանագետների փարիսեցիությունը, որոնց խոսքի եւ գործի միջեւ հայկական հիմնահարցում միշտ եղել է անդունդ, գոյություն է ունեցել անջրպետ: Ռուս դիվանագետը, նկատի առնելով Օսմանյան կայսրության պարագլուխների քամահրանքը միջազգային իրավունքի հանդեպ եւ այդ լույսի ներքո վերլուծելով արդուլիամիլյան եւ երիտթուրքական ներքին ու արտաքին քաղաքականությունը, անխուսափելի է համարում հայկական կոտորածները եւ բացահայտ ազգայնամոլությունը մյուս քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Մանդելշտամը Աբդուլ Համիդին նույնպես գնահատում է որպես մեծագույն բռնակալներից մեկը, որպիսին ելքեիցլ գիտեր Արեւելքը: «Համիտեան րէժիմի մասին կարելի է ըսել, թէ ան բոլոր պետութեան յատկանշական բոլոր կողմերը մղեց մինչեւ իրենց ծայրագոյն արտայայտութեանը. որոնք են, բռնապետութիւն հանդէպ բոլոր օսմանեան հպատակներուն, բռնն հայաժանք եւ ջարդ Քրիստոնեաներուն...»:² Այս առնչութեամբ նա իր բոլոր աշխատություններում դատապարտելով, արդուլիամիլյանների կազմակերպած հայկական ջարդերը, միաժամանակ

¹ Ա.Մանդելշտամ, նշվ. աշխ., մաս առաջին, էջ 8.

² Նույն տեղում, էջ 27:

անդրադառնում է մեծ տերությունների դիրքորոշմանը Արեւմտյան Հայաստանում նախատեսվող բարենորոգումների շուրջ, որոնց հակամարտության ու մրցակցության հետեւանքով կնքված համաձայնագիրը մնաց որպէս սոսկ թղթի կտոր եւ ուրիշ ոչինչ: Անձամբ «Արդուլ Համիդի հրամանով հարյուր հազարավոր դժբախտ հայերի 90-ական թվականների վերջին մորթոտեցին».¹ որոնք «պատմության առաջ վկայում են քրիստոնյա իր հպատակների նկատմամբ Արդուլ Համիդի իսկական վերաբերմունքի մասին»:² Ռուս դիվանագետը նկատի ուներ 1895 թ. հայկական կոտորածը, որը հանգեցրեց Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի միջամտությանը եւ արյունոտ սուլթանի կողմից 1895 թ. հոկտեմբերի 20-ի օրենքի ընդունմանը, որն, ի դեպ, Մանդելշտամի ճիշտ եզրակացության համաձայն մնաց որպէս «մեռած տառ»:³ Ի տարբերություն Արեւմտյան Հայաստանի մեծ տերությունները Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան Կրետեի հիմնահարցում փոխզիջման շնորհիվ հասան լուրջ հաջողության եւ հարկադրեցին կարմիր սուլթանին կատարելու իրենց բոլոր պահանջները: Միջազգային իրավունքի նշանավոր պրոֆեսորը նշում է Կրետեի հիմնախնդրում Արդուլ Համիդին պարտադրված զիջումները: Նախ, սուլթանը 1896 թ. օգոստոսի 27-ին ընդունեց կանոնագիր, որից հետո եվրոպական չորս մեծ տերությունները Կրետեի ինքնավարութունը վերցրեցին իրենց հովանավորության ներքո, ապա 1898 թ. հարկադրեցին Թուրքիային իր գորքերը դուրս բերել կղզուց, իսկ 1899 թ. մասնակցեցին Կրետեի սահմանադրության մշակմանը: Այս ծրագիրը թերեւս օգտագործվեց Արեւմտյան Հայաստանի համար բարենորոգումների նախագիծը մշակելու ընթացքում 1912-1914 թթ. դիվանագիտական քննարկումների ժամանակ: Իսկապէս, Կրետեի համար նախատեսված ծրագիրը իր բովանդակությամբ եւ կառուցվածքով ու ընդհանուր ոգով որոշ տարբերությամբ հանդերձ նման էր 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրին: Ռուսական դիվանագիտությունը ամենայն հավանականությամբ հաշվի էր առել Կրետեի օրինակի Հայկական Հարցի վերաբացելու եւ դիվանագիտական

¹ А.Мандельштам, Младотурецкая держава, М. 1915, стр. 4.

² Նույն տեղում, էջ 5:

նախաձեռնություն ցուցաբերելու ընթացքում: Ինչպես Կրետեի, այնպես էլ Արեւմտյան Հայաստանի կառավարումը մշակված նախագծերով համձնվում էր մեծ տերությունների համաձայնությամբ ու սուլթանի կողմից հաստատված գեներալ նահանգապետին: Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների եւ Հայկական Հարցի վերաբերյալ ընդհանրապես դիվանագիտական քննարկումները որպես կանոն միշտ էլ կամ ձախողվում էին եւ մտնում փակուղի, կամ էլ, անտեսվելով սուլթանի կողմից, վերածվում թղթի կտորի, մինչդեռ գրեթե նույն պատմափուլում ծագած Կրետեի հիմնախնդիրը իր բոլոր սահմանափակումներով եւ թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ստացավ լրական լուծում: Հավանաբար Կրետեի հարցում մեծ տերությունների եւ առաջին հերթին ավանդական մրցակիցների ու հակառակորդների՝ Ռուսաստանի եւ Անգլիայի հակամարտությունները այդ աշխարհահատվածում նվազ թույլ էին Արեւմտյան Հայաստանի համեմատությամբ: Ռուսաստանը Կրետեում չունեւ այնքան մեծ շահեր ինչպես Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան թուրքիայում ընդհանրապես, Արեւմտյան Հայաստանում, մասնավորապես: Կարենորագույն քաղաքական հիմնապատճառ, որը մի կողմից առարկայորեն նպաստեց Կրետեի հարցի դրական լուծմանը, իսկ մյուս կողմից Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների կանխարգելմանը: Նրկյորդ, Կրետեի հիմնախնդրի դրական լուծումը կապված էր Անգլիայի պետական-քաղաքական գործիչների ձեռնարկած հետեւողական, վճռական գործողությունների, դիվանագիտական ճկունության հետ, որով հնարավոր դարձավ ոչ միայն հաղթահարել Աբդուլ Համիդի դիմադրությունը, այլեւ ստանալ մեծ տերությունների համաձայնությունը: Այդպիսի վճռական դիրքորոշում ու՛ն Ռուսաստանը եւ ո՛չ էլ որեւէ մեկ այլ մեծ տերություն չցուցաբերեց եւ հետեւողականորեն չպարտադրեց Աբդուլ Համիդին 1895 թ. հոկտեմբերի 20-ին կանոնադիր ընդունելուց հետո իրագործելու Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը: Զգացվում էր Ռուսաստանի զգուշավորությունը, հատկապես դեռեւս հաղթահարված չէր Լոբանով-Ռոստովսկու քաղաքականության սովորոսւ ծալքերը: Ռուսաստանն այդպիսի հաստատականություն դրսեւորեց

Բեռլինի վեհաժողովում 1878 թ., բայց մեկուսացվեց եվրոպական դիվանագիտության կողմից ու հարկադրաբար մահանջեց՝ զիջումներ կատարելով մեծ տերություններին, որից առաջին հերթին տուժեցին արևմտահայերը, եւ, իհարկե, շահեց Թուրքիան։ Ահա ինչու Հայկական Հարցը ոչ միայն մեռյալ կետից չէր շարժվում, առավել եւս լուծում չէր ստանում, Մանդելշտամի դիպուկ բառերով ասած, դառնում էր «մեռած տառ»։ Ուստի միանգամայն օրինաչափ է ու տրամաբանական, որ նա իր բոլոր աշխատություններում ուշադրություն է սեւեռել Արեւմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու շուրջ մեծ տերությունների կողմից մշակված նախագծերի, դրանց քննարկումների, հակասությունների, Թուրքիայի նկատմամբ տերությունների իրարամերժ դիրքորոշման վրա։ Ամեն անգամ մեծ տերությունների անպատու միջամտությունից հետո առիթ էր ներկայանում Օսմանյան կայսրության տիրակալների համար իրագործելու հայկական ջարդերը։ Բավական է ասել, որ Գերմանիայի կայսեր Վիլհելմ 2-րդը երկու անգամ այցելեց Թուրքիա եւ իրեն հայտարարեց բոլոր մահմեդականների բարեկամը։ «Ապտիւ Համիդ է որ Հայու արիւնով կարմրած իր ձեռքը,- գրում է Մանդելշտամը,- դրաւ այն թաւակիր մեծ խեղկատակին (Վիլհելմ 2-րդի -Մ.Մ.) ձեռքին մէջ, որ ինքզինքը յայտարարեց իբր բարեկամը 300 միլիոն Իսլամներու»։¹

Մանդելշտամը հայերի կոտորածները Ադանայում 1909 թ. կապում է ու, թերեւս, վերագրում արդուլիսմիդյան հին վարչակազմին. քանզի այդ օրերին կարմիր սուլթանի կողմնակիցները կատարեցին հեղաշրջում եւ մոտ երկու շարաթով վերցրին իշխանությունը վերստին դառնալով երկրի տերը։ Իսկ «հեղափոխական» երիտթուրքերը,- գրում է նա,- որոնց պարագլուխները երեսկայությանը զոր տալով իրենց համեմատում էին յակոբիների հետ, վախկոտություն ցուցաբերելով, դիմեցին փախուստի եւ Նոր Մեքքայից Կ.Պոլսից ճողոպրեցին հարազատ Մեդինա՝ Սալոնիկ։ Այս դատողությունը ճշմարիտ է միայն մասնակիորեն, որովհետեւ, ինչպես գրում են Մանդելշտամի «Օսմանյան կայսրության ճակատագիրը եւ Հայկական Հարցը» գրքի հայերեն թարգմանները, «Այսօր

¹ Ա.Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 27-28։

հաստատուած է, որ Առանայի ջարդը կազմակերպուած մարտի 31-ի յետաշրջական փորձէն առաջ, իր գործադրութեամբը զուգահիշած է յետաշրջութեան փորձի օրերուն»:¹ Պատմական ճշմարտութիւնն այն է, որ Առանայի կոտորածների մեջ երիտթուրքերի մեղսակցութիւնը չափազանց մեծ է: Այդ հերթական ողբերգութիւնը մեկ անգամ եւս միանշանակ վկայեց մի անվիճելի պատմափաստ՝ հայ ժողովրդի նկատմամբ թուրքական բոլոր իշխանութիւնների դիւրբողման ու քաղաքականութեան ելակետը եղել է մարտնչող եւ անհանդուրժող ազգայնամոլութիւնը: Եւ միանգամայն տրամաբանական է Մանդելշտամի ճշմարտացի եզրակացութիւնը, որի համաձայն «նրանց (երիտթուրքերի -Մ.Մ.) բռնութիւնն արդեն ոչնչով չէր տարբերվում Աբդուլ Համիդի բռնատիրութիւնից»:² Այդպիսի կարեւոր եզրահանգման համար Մանդելշտամը հիմք է ընդունում երիտթուրքերի կենսագործած քաղաքականութիւնը Օսմանյան կայսրութեան մեջ ներկայված քրիստոնյա ժողովուրդների, ներառյալ արեւմտահայութեան նկատմամբ, որի ականատեսն էր նա տարիներ շարունակ որպէս ռուսաց դեսպանատան աշխատակից: «Ինչ վերաբերում է հայերին,- գրում է նա,- ապա եւ այդ դժբախտ ժողովրդի ծանր տառապանքները երիտթուրքերը չղաղարեցրին, այն նույն երիտթուրքերը, որոնց հետ հայ դաշնակցականները մի ժամանակ ձեռք-ձեռքի տված գործում էին Աբդուլ Համիդի լուծը տապալելու համար: Եւ շարունակում է նա,- Առանայի ջարդերից հետո զանգվածային ջարդեր տեղի չունեցան, բայց հայկական վիլայեթներում յուրաքանչյուր հայի կյանքը, պատիվը եւ գույքը առաջվա պէս կախված էին քուրդ բեյերի կամայականութիւնից. 1896 թ.-ի ջարդերից հետո հայերից բռնազավթած հողերը չէին (ընդգծումը Մանդելշտամի -Մ.Մ.) վերադարձվել. իսկ հայ պատրիարքի բոլոր բողոքները մնում էին անհետեւանք»:³ Եթե «Երիտթուրքական տերութիւնը» գրքույկում Մանդելշտամը քննարկում է 90-ական թթ. արեւմտահայութեան ջարդերը եւ 1909 թ. Առանայի կոտորածը, ապա Հայոց Մեծ Եղեռնի հիմնահարգին նա անդրադարձել է իր

¹ Ա.Մանդելշտամ, նշվ. աշխ.. էջ 50:

² А.Мандельштам, Младотурецкая держава, стр. 32.

³ Նույն տեղում, էջ 20.

«Օսմանյան կայսրության ճակատագիրը եւ Հայկական Հարցը» ստվարածավալ մենագրությունում: Պատմական փաստ է, որ Ադանայի կոտորածից մինչեւ Մեծ Եղեռնը հայ ժողովրդի արյունը եւս կաթիլ առ կաթիլ հոսում էր Օսմանյան կայսրության ողջ տարածքում երիտթուրքական իշխանության վայրագ քմահաճույքից ու քրդական բիրտ ընչաքաղցությունից:

Մանդելշտամի աշխատություններում մեծ տեղ է հատկացված Հայկական Հարցի պատմության համար առանցքային նշանակություն ունեցող էջերից մեկին 1912-1914 թթ. Արեւմտյան Հայաստանում բարենորոգումների շուրջ ծավալված դժվանագիտական հերթական պայքարին, որը կարծես դարձել էր ավանդույթ մեծ տերությունների համար: Այս պատմափուլում Ռուսաստանի դիրքորոշումը ի տարբերություն 1895-1896 թթ. ավելի որոշակի էր ու հստակ, հետեւողական եւ համարձակ, վճռական եւ գործուն, ուստի օրինաչափ է, որ ռուսական դժվանագիտությունը այդ ամենի շնորհիվ այս անգամ ի վերջո ձեռք բերեց Անգլիայի ու Ֆրանսիայի համաձայնությունը, իսկ Գերմանիային առանձին զիջումներ կատարելու միջոցով հաղթահարեց նրա դիմադրությունը եւ առարկումները: Կասկած չի կարող հարուցել, որ եթե չսկսվեր առաջին աշխարհամարտը Ռուսաստանը անխուսափելիորեն կպայտադրեր Թուրքիային կատարելու իր հանդեպ ստանձնած պաշտոնական պարտավորությունը եւ դրանով իսկ Արեւմտյան Հայաստանի համար մշակված բարենորոգումների ծրագիրը կդառնար իրականություն: Այս տեսակետը գերիշխող էր ռուսական թե՛ պաշտոնական, թե՛ պետական-քաղաքական, դժվանագիտական եւ թե՛ պատմագիտական շրջաններում:¹ Այդ լավատեսությունը, անշուշտ, պայմանավորված էր ռուսական գեներլի վճռական հաղթանակներով, բայց դժվար էր ենթադրել քաղաքական եւ ռազմական իրադարձությունների այդպիսի կտրուկ շրջադարձ եւ համապատասխանաբար Ռուսաստանի, ապա եւ հատկապես արեւմտահայերի շահերի տեսանկյունից ոչ իրատես, անսպասելի արդյունք, կապված հոկտեմբերյան հեղաշրջման եւ դրան հաջորդած քաղաքական իրադարձությունների հետ:

¹ "Будущее устройства Армении (по официальным данным. Третья оранжевая книга). Реформы в Армении. Петроград, 1915.

Մանդելշտամը մանրամասնորեն քննարկում է Արեւմտյան Հայաստանի վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի բովանդակությունը եւ մատնանշում, որ Թուրքիան այն ստորագրեց հարկադրաբար, դիվանագիտական իր բոլոր հնարքները սպառելուց հետո: Համաձայնագիրը ստորագրեցին Թուրքիայի կողմից մեծ վեզիր Սաիդ-Խալիլ փաշան, իսկ Ռուսաստանի կողմից ժամանակավոր հավատարմատար Գուլկելիչը: Համաձայնագրով Արեւմտյան Հայաստանի կառավարումը հանձնարարվում էր օտարերկրացի երկու գեներալ տեսուչներին. բնակչությանը տրվում էին որոշակի արտոնություններ տեղական ինքնավարության, լեզվի, դատարանի եւ այլ մարզերում: Թուրքիան Ռուսաստանի առաջ պարտավորվում էր դիմել տերություններին նոտայով հայկական վիլայեթներում բարենորոգումների մասին:¹ Բայց Թուրքիան համոզված էր, որ այս համաձայնագիրը եւս չի իրագործվելու, քանզի արդեն զգացվում էր առաջին աշխարհամարտի մոտալուտ շունչը, որին անխուսափելիորեն մասնակցելու էր Օսմանյան կայսրությունը: Ահա ինչու ծերուկ սուլթանը, որ «Վոսփորի վրայ,- գրում է Մանդելշտամը,- Պէյերպէյի իր գեղեցիկ պալատէն այս նկարը դիտելով իրաւունք պիտի ունենար գոչելու «մեծ է Ալլահը, ապահովաբար պէտք չկար կառավարութիւն փոխելու»:²

Հետաքրքիր են եւ ուշագրավ Մանդելշտամի դիտարկումները Գերմանիայի դիրքորոշման եւ քաղաքական ողջ վարքագծի վերաբերյալ հայկական բարենորոգումների հիմնախնդրում: Նրա ընդունելի տեսակետով Գերմանիան. Հայկական Հարցում գրավելով երկակի դիրք, պարզապէս վարում էր երկակի խաղ, քանզի նա մի կողմից ձգտում էր որքան հնարավոր է կանխել Թուրքիայի համար չափազանց վտանգավոր ու անցանկալի Արեւմտյան Հայաստանի ինքնավարության իրագործման ծրագիրը, իսկ մյուս կողմից, ելնելով իր ռազմավարական խնդիրներից ձեռք բերել հայ բնակչության համակրանքը: Գերմանական դիվանագիտության հաշվարկներով նման քաղաքականությամբ հնարավորություն կընձեռվեր էլ ավելի ամրագրել կապերը Թուրքիայի հետ,

¹ А.Мандельштам, Младотурецкая держава, стр. 34-35.

² Ա.Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 94:

ուժեղացնել իր ազդեցությունը երկրում, նրան գամել իր մարտակառքին, որովհետեւ թուրքական կառավարող շրջանների շնորհապարտ կլինեն կայգեր հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուսական ծրագիրը զգալիորեն սեղմելու եւ սահմանափակելու, իսկ արեւմտահայերը գոն կմնան Գերմանիայից այդ նախագծին հավանություն տալու եւ դրա իրագործմանը կանաչ ճանապարհ բացելու համար։ Ի՞նչ արդյունք սովեց այս խորամանկ եւ հեռու գնացող դիվանագիտական խաղը։ Ըստ Մանդելշտամի իրավացի տեսակետի գերմանական կառավարության մտահղացումը իր կողմը գրավել ոչ միայն թուրքական դահիճներին, այլեւ նրանց կողմից ծվատվող հայերին կրեց կատարյալ անհաջողություն։ «Մինչդեռ ռուսական նախագծի նենգադուլը,- ընդգծում է Մանդելշտամը,- արեւմտահայերի շրջանում առաջացրեց բուռն գայլույթ Գերմանիայի դեմ։ Բեռլինից շտապ կանչված գերմանական հայագետ դոկտոր Լեփսիուսին չհաջողվեց հաղթահարել հայ հասարակության տրամադրությունը, թեւ նա ջանում էր հայերին հրապուրել գերմանական կառավարության հաշվին Թուրքիայում հայկական դպրոցներ բացելու, ինչպես նաեւ թուրքական զինված ուժերի հրամանատարությունը գերմանական սպաներին անցնելու հանգամանքով։ Այս վերջին բարեփոխումը,- մատնանշում է նա,- պատվավոր դոկտորի կարծիքով պետք է որ լիովին ապահովեր հայերի անձի ու գույքի անձեռնմխելիությունը։ Տեսնելով իր սիրաշահման անհաջողությունը, Գերմանիան,- կատարում է կարեւոր եզրակացություն Մանդելշտամը,- բանակցությունների վերջում հայերի նկատմամբ գրավեց խիստ թշնամական դիրքորոշում»։¹ Ի՞նչ նշանակություն ունեւ Լեոսաստանի համար 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, քաղաքական ի՞նչ պտուղներ էր ակնկալում ստանալ ռուսական դիվանագիտությունը Թուրքիայի կողմից ստանձնված պայմանագրից։ «Լեոսաստանի համար հունվարի 26-ի ակտի իսկական նշանակությունն այն է, որ նա բովանդակում է Թուրքիայի կողմից արեւմտահայերի նկատմամբ ռուսական հովանավորության պաշտոնական ճանաչումը (ընդգծումը Մանդելշտամի), այսինքն Բեռլինի դաշնագրության 61-րդ

¹ А.Мандельштам. Младотурецкая держава, стр. 50.

հողվածից մեզ վերստին բերեց Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածին»:¹ Մանդելշտամի գնահատականը իրական է թե՛ պատմաքաղաքական եւ թե՛ միջազգային իրավունքի տեսակետից: Սակայն առաջին աշխարհամարտը ոչ միայն անհնարին դարձրեց արեւմտահայության համար նախատեսված բարենորոգումները, այլեւ հնարավորություն տվեց երիտթուրքերին իրագործել Հայոց Ցեղասպանությունը: «Հենց երիտթուրքական կառավարությունը,- գրում է նա,- նախապես սլակված մտադրությամբ սառնասրտորեն ղեկընտարեց հայ ժողովրդի ոչնչացումը... Թուրքական կառավարությունը ցցուն անողորմությամբ արգելում էր ու մերժում յուրաքանչյուր գթասիրտ միջամտություն... Նա ավելի մեծ դաժանությամբ քան Աբդուլ Համիդի ժամանակ մահապատժի էր ենթարկում այն թուրքերին, որոնք համարձակվում էին օգնել հայերին»:² Իր խորաթափանց եւ ողջախոհ դատողություններով Մանդելշտամը հանգել է այն համոզմունքին, որ բարենորոգումները արեւմտահայության համար հույժ անհրաժեշտություն էին, քանզի նրանք ջնջվում էին երիտթուրքական վայրենաբարո եւ պատժիչ վարչակազմից: Մանդելշտամը փաստերով ապացուցում է, որ պատերազմը բարենպաստ պայմաններ ստեղծեց ու հնարավորություն բնձնեց երիտթուրքերի պարագլուխներին կատարել խոշոր քայլ հայկական հիմնահարցի լուծման ուղղությամբ այն ձեռով, որ սկսել էր դեռեւս սուլթան Համիդը. ոչնչացնել մի ամբողջ ազգ, որ դարձել էր մեծ տերությունների ծանր մտահոգության առարկան: Նրա կարծիքով երիտթուրքերին հաջողվեց բնաջնջել մոտ մեկ միլիոն մարդ, մահ եւ ավերածություններ սփռել Արեւմտյան Հայաստանում: Այս առնչությամբ Մանդելշտամը պատկազերծում է Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանհենհայմի կեղծիքը, որ “Grosse Politik”-ի էջերում դատապարտում էր Ռուսաստանին քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես հայերին, Օսմանյան կայսրության դեմ հրահրելու համար, որոնք հարկադրում էին թուրքական իշխանություններին դիմելու պատժիչ միջոցների, ընդհուպ մինչեւ կոտորածները եւ ֆիզիկական բնաջնջումը: Դեսպանի միտքը ավելի քան

¹ А.Мандельштам. Младотурецкая держава, стр. 50.

² “Армянский вопрос”. Энциклопедия. Ереван, 1991

հասկանալի է: Պարզունակ ու, իհարկե, միակողմանի է՝ Օսմանյան կայսրությունում պարբերաբար կազմակերպված եւ ամենայն դաժանությամբ ի կատար ածված հայկական կոտորածները պատճառաբանել սոսկ Ռուսաստանի սադրանքներով: Դա կնշանակի Հայոց Յեղասպանության իսկական շարժառիթները ներկայացնել գլխիվայր. շրջված ձեռով, ճիշտ այնպես, ինչպես ցանկալի էր երիտթուրքերի պարագլուխներին: «Դրան հակառակ,- նշում է ռուս դիվանագետը,- յայտնի է, թե հայկական իսկական կոտորածներ տեղի ունեցան 1915-ին, ռուս դեսպանութեան մեկնումից յետոյ: Եւ բարոն Վանգենհայմը, անշուշտ, այն ժամանակ կարողացաւ համոզել, թե այս խնդրում «Միութեան եւ Յառաջադիմութեան Կոմիտէի» ասպետներ Թալեաթները, Էնվերները, Նազիմները, Բեհաեդդին-Շաքիրները բնաւ կարիք չունէին որեւէ գրգռումի, ինչ-որ օտար դրդումի»:¹ Միանգամայն իրատես դատողություն եւ հրատապ եզրակացություն:

¹ Վեմ Երկամսեաց հանդեսն մշակոյթի եւ պատմութեան , 1935թ. №2, էջ 63:

Ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների կողմից Մեծ եղեռնի կազմակերպիչների գործունեության դատապարտող գնահատականները եւս մեկ ապացույցն են այն փաստի, որ այս հանցագործությունը, ուղղված լինելով հայ ժողովրդի դեմ, միաժամանակ բացահայտ քաղաքական ապստակ էր քաղաքակիրթ աշխարհին: Արդեն 1915 թ. Ռուսաստանի անմիջական նախաձեռնությամբ դաշնակից պետությունները՝ Անգլիան, Ռուսաստանը եւ Ֆրանսիան Մեծ եղեռնը գնահատեցին իբրեւ մարդկության դեմ հանցագործություն: Պետությունների պաշտոնական հայտարարությունը նոր ազդակ էր ռուսական հասարակական-քաղաքական մտքի կողմից հայության նկատմամբ իրականացված քաղաքականությունը մերկացնելու համար:

20-րդ դարի վերջին Ռուսաստանը դարձավ առաջին տերությունը, որ պաշտոնապես դատապարտեց Հայոց Ցեղասպանության կազմակերպիչներին եւ ապրիլի 24-ը ընդունեց իբրեւ Նդեռնի գոհերի հիշատակի օր: Պետական Դումայի հայտարարությունը շարունակությունն էր ռուսական դումաներում ցեղասպանության խնդրի պարբերական բարձրացման քաղաքականությանը: Չորրորդ Պետական Դումայում հնչեցին երիտթուրքերին դատապարտող կրակոտ ելույթներ, իսկ հինգերորդ Պետական Դուման դատապարտող բանաձեւը ընդունեց միաձայն 282 պատգամավոր:

Օսմանյան կայսրության մեջ իրականացվող հետետողական հայաջինջ քաղաքականությունը հայ ժողովրդին կանգնեցրեց դաժան երկրնտրանքի առջեւ՝ կամ ոչնչանալ առանց դիմադրության, կամ բարձրացնել ազգային ազատագրական պայքարի դրոշմ: Ի պատիվ հայության, ընտրվեց անհավասար գոյամարտի ուղին եւ, չնայած հսկայական կորուստներին, ժողովուրդը վերապրեց եւ վերածնվեց: Կանգնի եւս որոշ ժամանակ եւ հայ ժողովուրդը կնշի Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցը: Սակայն այն կդառնա ոչ

միայն սոսկ հարգանքի եւ հիշողության տուրք, այլ նաեւ վճռական նախազգուշացում աշխարհին, որ հայ ազգը այլեւս չի կառուցելու սգո նոր հուշարձաններ եւ կերտելու է իր պետությունը հայրենիքի ամբողջական տարածքում:

Մուտք	5
Գլուխ I	
Մեծ ու բարդ Հայոց Հարցը եւ սովորական թուրքիվներ	7
Գլուխ II	
Ճշմարտությունը հաղթում է, արդարությունը՝ հաղթանակում, Մարտը՝ ճնշվում . . .	38
Ամփոփում	69

The Armenian Tragedy as evaluated by the Russian social and political thought

Center for the Study of Nationalities Problem and Genocide
Yerevan, 1997

The work is dedicated to the elucidation of the history of the Genocide of Armenians in the Ottoman Empire by Russian historians and other representatives of Russian socio-political thought. The subject has not only scientific significance, but also political importance and urgency.

The booklet is intended for specialists and general readership.

Армянская трагедия по оценке русской общественно-политической мысли.

Центр по Изучению Национальных Вопросы и Геноцида
Ереван, 1997

Работа посвящена раскрытию отношения к истории, геноцида армян в Османской империи со стороны представителей русской общественно-политической и историографической мысли. Тема имеет не только научное значение, а так же политическую важность и актуальность.

Книга предназначена для специалистов и широкого круга читателей.

«Ազգային Հարցի եւ Գեոցիդի Ուսումնասիրման Կենտրոնը»-ը հիմնադրվել է Նրեւանում: Այն ոչ կառավարական հասարակական կազմակերպություն է, որը զրանցվել է ՀՀ Արդարադատության մախարարության կողմից 1993 թ.:

Կենտրոնի նպատակն է՝ համադրելով մասնագետների ջանքերը ներդրում կատարել ազգային հարցի եւ գեոցիդի համակարգված ուսումնասիրության բնագավառում, վեր հանել այդ խնդիրներին առնչվող բազմաթիվ հիմնահարցերը եւ ծավալել գիտահետազոտական գործունեություն ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Կենտրոնը առաջնորդվում է այն հիմնադրությով, որ ազգային եւ հարակից հարցերը մարդկային համակեցության առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրներից են եւ առնչվում են այնպիսի հանրահայտ սկզբունքների, ինչպիսիք են ազգերի ինքնորոշումը, մարդու եւ փոքրամասնությունների իրավունքները: